*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_______________ 2019թ. N_____Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝

1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Երևանի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում Երևան քաղաքի ավագանուն:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը կազմվել է Երևանի քաղաքապետի 27.03.2018թ. 1105-Ա որոշմամբ ընդունված ձևաչափով:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Ծրագրի կամ միջոցառման անվանում», «Նախատեսված աշխատանքների նկարագիր», «Աշխատանքների իրականացման գործընթաց» և «Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ»: Հաշվետվության կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ　　　　　　　　　　　　　　Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

*Հավելված*
*Երևան քաղաքի ավագանու*
*2019 թվականի -------ի N ---Ա որոշման*

# Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինություն և ճարտարապետություն....4
Արտաքին ձևավորում և գովազդ....14
Շինարարություն և բարեկարգում....20
Անշարժ գույքի կառավարում....28
Կոմունալ ոլորտ....34
Առևտրի և սպասարկումների ոլորտ....39
Տրանսպորտ....44
Բնապահպանություն....51
Հանրակրթություն....54
Առողջապահություն....61
Սոցիալական ապահովություն....63
Մշակույթ....69
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ....80
Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ....91
Միջազգային համագործակցություն....97
Զբոսաշրջություն....106
Աջափնյակ վարչական շրջան....112
Ա վ ա ն վ ա ր չ ա կ ա ն շ ր ջ ա ն....124
Արաբկիր վարչական շրջան....139

Էրեբունի վարչական շրջան ........ 160
Դավթաշեն վարչական շրջան ........ 178
Կենտրոն վարչական շրջան ........ 190
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան ........ 203
Նոր Նորք վարչական շրջան ........ 222
Նորք-Մարաշ վարչական շրջան ........ 239
Նուբարաշեն վարչական շրջան ........ 246
Շենգավիթ վարչական շրջան ........ 262
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան ........ 276

| Քաղաքաշինություն և ճարտարապետություն | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն և հաշվառում | Նախատեսվում է Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն և հաշվառում: | «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքներ» ՊԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/12, 20.02.2018թ. 2018թ.-ին նախատեսված աշխատանքները ավարտվել են և թողարկվել է սահմանված ժամկետում: | «Երևաննախագիծ» ՓԲԸ 20.02.2018թ.-20.12.2018թ. | |
| 2. | Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում | Կիրականացվի Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում և հասարակության իրազեկում: | Նախապատրաստվել է Նոր-Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի քաղաքաշինական առաջադրանքի նախագիծը Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար: | Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, Աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն | Ծրագիրը կասեցվել է, քանի որ 2019թ. նախատեսվում է մեկնարկել ամբողջ քաղաքի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներ |
| 3. | Չորրորդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքերի բնակիչներին նոր բնակարաններով ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում | Չորրորդ կարգի վթարայնության աստիճան ունեցող շենքերի բնակիչներին նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ նախկին, քանդված վթարային շենքի տեղում նոր բազմաբնակարան շենքի կառուցման մեկնարկ: | 1.ՀՀ Երևանի քաղաքապետի որոշում 20.02.2018թ. N596-Ա «Գնման ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին՝«Ինժգարանտ» ՍՊԸ-ին ուղղակի վաճառքի միջոցով հողամաս տրամադրելու մասին»<br>2. Գլխավոր հատակագիծ՝ թողարկված (02.03.2018թ. N291-2018թ.Միասնական 3 հասցեում S=1187.14քմ )<br>3.Նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք) 19.06.2018թ. N01/18-07/2-41071-448 տրամադրվել է «Ինժգարանտ» ՍՊԸ-ին<br>4. «Ինժգարանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայանցված բազմաբնակարան բնակելի շենքի համար համաձայնեցվել են | աշխատակազմի անշարժ գույքի կառավարման և ճարտարապետության ու քաղաքաշինության վարչություններ, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, «Ինժգարանտ » ՍՊԸ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախագծային փաստաթղթերը՝<br>-Նախագիծ-06.07.2018թ. N01/18-05/2-47752-621<br>-Շինարարության թույլտվություն- 06.07.2018թ. N01/18-47752-744 /ժամկետ 540 օր/<br>5.Չորրորդ եռամսյակում բնակելի շենքի հիմքերի շինարարական աշխատանքներ են ընթացել: | Հունվար-դեկտեմբեր | |
| 4. | «Հին Երևան» ծրագիր | «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ կառուցապատման աշխատանքներ կընթանան Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում՝ արդիականացնելով, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ: | «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում՝ <<Սերգե-Ազոպիգ-Դեր-Սահագույան>> ՍՊԸ-ի և <<Սթարլայն>> ՍՊԸ-ի կողմից իրականացվել են շենքերի կմախքի երկաթբետոնե շինարարական աշխատանքները: Աշխատանքները շարունակվելու են 2019 թվականին, իսկ մյուս կառուցապատողի՝ <<Ի ԷՄ ՍԻ>> ՓԲԸ կողմից ՀՀ կառավարության 2017թ. հունիսի 1-ի հ. 585-Ն որոշմամբ գույքերի օտարման գործընթացի համար մինչև 2018թ. հունիսը սահմանված ժամկետում աշխատանքերն ամբողջությամբ չեն իրականացվել: 2018 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՀ կառավարության հ. 1376-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետին լիազորություն է վերապահվել վերոհիշյալ ընկերության հետ կնքելու նոր պայմանագիր: Պայմանագրերը կնքվել են, 28.12.2018թ. ընդունվել է տարածքը հանրային գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության հ. 1528-Ն որոշումը: Գույքերի օտարման աշխատանքները կշարունակվեն 2019 թվականի ընթացքում: | Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ<br>Հունվար-դեկտեմբեր | |
| 5. | Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիր | Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի շրջանակներում կշարունակվեն իրացման աշխատանքներ: | **Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի իրականացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.**<br>**1.ՀՀ կառավարության որոշում 08.02.2018թ. N99-Ա «Երևանի քաղաքապետին լիազորություն վերապահելու մասին»**<br>«Սիթի Սենթր Դիվելըփմենթ» ՓԲԸ-ի և թվով 17 ՍՊԸ-ների հետ կնքվել է Երևան քաղաքի 33-րդ թաղ. տարածքների սեփ. | Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օտարման գործընթացում պետության և ձեռք բերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագիր, տվյալ պայմանագրերն ուժի մեջ են մտնում նշված տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից:<br>**2.Երևանի քաղաքապետի որոշում 22.02.2018թ. N632-Ա «ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 8-ի N99-Ա որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին»**<br>-Երևանի գլխավոր ճարտարապետի և ՃՔ վարչության կողմից նշված տարածքների համար կազմվել են սխեմաներ և տրամադրվել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»-ին, ԾԻԳ-ը պատրաստել է պայմանագրերի նախագծերն ու ՀՀ կառավարոթյան որոշման նախագիծը:<br>**3.Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշում**<br>**4.Երևանի քաղաքապետի 09.04.2018թ. N1322-Ա «ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի N332-Ն որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշում**<br>5. Թողարկվել են հատակագծեր:<br>6. Համաձայնեցվել է կառուցապատման սխեմա:<br>7.Երրորդ եռամսյակում սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրությունների կազմման գործառույթներ են իրականացվել և առաքվել են գույքի սեփականատերերին: | գրասենյակ»<br>Հունվար-դեկտեմբեր | |
| 6. | «Երևանյան պողոտա» ծրագիր | Մշակութային զբոսաշրջության զարգացմանը խթանող «Երևանյան պողոտա» պատմական Երևանի | Ներդրումային առաջարկ ներկայացրած կազմակեպությունը չի իրականացրել աշխատանքներ 2018թ.-ին: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դիմագիծը ներկայացնող ներդրումային ծրագրին ընթացք տալու համար կկազմակերպվեն քննարկումներ: | | | |
| 7. | Համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացում | Նախատեսվում է շարունակել համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացումը: | Համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ մասնավոր ներդրողների կողմից մեկնարկել և շարունակվել են իրականացվել մի շարք ծրագրեր.<br>**1. «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ին կանաչապատման (այգու ստեղծման), ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար ներդրումային ծրագիր**<br>1.1.ՀՀ կառավարության որոշում 11.01.2018թ. N5-Ա «Ներդրումային ծրագրին հավանություն տալու «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ն առանց մրցույթի հողամաս տրամադրելու մասին»<br>1.2.ՀՀ Երևանի ավագանու որոշում 13.01.2018թ. N119-Ա «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին»<br>1.3.Երևանի քաղաքապետի որոշումներ 12.02.2018թ. N418-Ա ,14.02.2018թ. N470-Ա<br>1.4. Գլխավոր հատակագիծ ՝թողարկված 12.02.2018թ. N182-2018թ. S=27.66 հեկտար Մ.Մելքոնյան փող. 31 հասցեում /հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված/<br>1.5 Վարձակալության պայմանագրի կնքում է կատարվել 02.05.2018թ. N1012, «Պարկ Գրուպ» ՍՊԸ-ն հողամասի վարձակալության պետական գրանցում է ստացել 08.05.2018թ.:<br>1.6 Մոնթե Մելքոնյան փողոցի հ.31 հասցեում Մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոնի ստեղծման ներդրումային ծրագրի հայեցակարգային առաջարկը քննարկվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի խորհրդի նիստում /Արձանագրություն 27.07.2018թ. N.4 / առաջարկությունների ու դիտողությունների ներկայացմամբ ծրագրին հետագա ընթացք ստանալու հնարավորություն է տրվել: | Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1.7 Երևանի քաղաքապետի որոշում N2823-Ա 13.08.2018թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի N5-Ա որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին»:<br>1.8 Տրամադրվել է նախագծման թույլտվություն /ՃՀԱ/-26.10.2018թ. N01/18-07/2-56264-717:<br>**2.«Ջի Էմ Դևելոփեր» ՍՊԸ-ի ներկայացրած ներդրումային ծրագիրը՝ բազմաբնակարան շենքի և Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի կառուցման մասին**<br>2.1. ՀՀ կառավարության 31.08.2017թ. N1148-Ն որոշում և ՀՀ կառավարության 31.08.2017թ. նիստի N37 քաղվածք /հավանության է արժանացել/:<br>2.2 Ծրագրով նախատեսված 1-ին փուլի շրջանակներում Ամիրյան h.26/4 հողամասում բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքները ընթանում են, երկաթբետոնյա կարկասային աշխատանքներն ավարտվել են (ավարտը 2019թ. վերջ):<br>2.3 Ծրագրով նախատեսված 2-րդ փուլի շրջանակներում «Ջի Էմ Դևելոփեր» ՍՊԸ -ին Անրի Վերնոյի փող. h.3 հասցեում Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի նոր մասնաշենքի կառուցման համար դեռևս տրամադրված նախագծման թույլտվության/ՃՀԱ/-10.09.2018թ. հիման վրա ընթանում են նախագծային աշխատանքները:<br>**3. ՀՀ կառավարության որոշում 22.03.2018թ. N308-Ա «Ներդրումային ծրագրին հավանություն տալու և «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությանը հողամաս օտարելու մասին»**<br>3.1Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում հասարակական կազմակերպության կողմից իրականացվելու է բնակարանային ապահովության սոցիալական-ներդրումային ծրագիր Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից 6.5 հա մակերեսով հողամասում՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Վերածնունդ» երիտասարդական ավանի կառուցում: Ավանը կունենա շուրջ 1000 բնակարաններ, կանաչապատ հանգստի գոտիներ, մանկապարտեզ, կենցաղ-սպասարկման և հասարակական նշանակության տարածքներ: Ծրագիրը կավարտվի 2021թվականի հուլիսի 1-ին:<br>3.2. Երևանի քաղաքապետի որոշում 06.04.2018թ. N1283-Ա «Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությանն ուղղակի վաճառքի ձևով հողամաս օտարելու, հացե տրամադրելու մասին»<br>3.3. Գլխավոր հատակագիծ՝ թողարկված 18.04.2018թ. N553-2018թ. S=6.57հա հեկտար Մ.Մելքոնյան փող. 44 հասցեում /բնակավայրերի նպատակային նշանակությամբ, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման/<br>3.4 «Վերածնունդ» երիտասարդական ավանի (բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ համալիրներով) էսքիզային առաջարկ-նախագծի քննարկում է տեղի ունեցել Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի խորհրդի 08.06.2018թ. և 20.07.2018թ.-ին անցկացված նիստերում:<br>3.5. Տրամադրվել է նախագծման թույլտվություն /ՃՀԱ/- 23.07.2018թ. N01/18-07/2-53967-553<br>3.6 «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացվել է նախագծային փաթեթ երկու շենքի հիմնային աշխատանքների համաձայնեցման համար և տրամադրվել է դրանց շինարարության թույլտվություն:<br>**4. «Ինժեներական քաղաք»-ի հայեցակարգ, որի հիմնական նպատակն է Հայաստանում ինժեներական քաղաքի հիմնման միջոցով նպաստել Հայաստանում ինժեներական և բարձր տեխնոլոգիաների (այսուհետ՝ ԻԲՏ) ոլորտի հետագա** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **զարգացմանը՝ խթանելով Հայաստանում տնտեսության մրցունակության և արտադրողականության մակարդակի բարձրացումը (սա մասնավոր-պետություն համագործակցության օրինակ է)**<br>4.1 «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգ ՀՀ կառավարության 01.03.2018թ. N8 արձանագրային որոշում ««Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացուցին հավանություն տալու մասին»<br>4.2 Երևանի քաղաքապետի կարգադրություն N453-Ա 15.06.2018թ.«Գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու մասին» /Բագրևանդի փող. h.74 հասցեում գտնվող 3հա հողամասի վերաբերյալ/,<br>4.3 ««Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին»ՀՀ կառավարության 01.11.2018թ. N1215-Լ որոշում<br>4.4 ՀՀ Երևանի քաղաքի ավագանու 13.11.2018թ. N23-Ա որոշում «Հողամաս նվիրելու մասին» (Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոցի h.74 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 3հա մակերեսով հողամասը նվիրվել է Հայաստանի Հանրապետությանը)<br>4.5 Ըստ նախագծի՝ շինարարական աշխատանքները կսկսվեն հաջորդ տարվա առաջին եռամսյակում՝ համապատասխան ընթացակարգերն անցնելուց հետո, 2020 թվականի դեկտեմբերի երրորդ տասնօրյակում նախատեսվում է ավարտել այս նախագիծը:<br>Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի խորհրդի անցկացված նիստերում քննարկվել են<br>**5.Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ Էմինեսկուի փողոցին կից (Մյասնիկյան պողոտայի և** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Ռուբինյանց փողոցի միջանկյալ տարածքում) բնակելի-բազմաֆունկցիոնալ համալիր:**<br>Էսքիզային առաջարկը /արձ.27.07.2018թ. հ.4/ (Տրամադրվել է նախագծման թույլտվություն(ՃՀԱ) 20.08.2018թ. N01/18-07/2-24205-603, քանդման թույլտվություն ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման նպատակով 26.09.2018թ. N01/18-Է-149-80),<br>**6.Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում՝ Նիկողայոս Տիգրանյան փողոցին կից բնակելի բազմահարկ կառուցապատմամբ թաղամաս:**<br>Էսքիզային առաջարկը ((արձ.21.02.2018թ. N1), համաձայնեցվել են նախագծային փաստաթղթերը 27.04.2018թ. N01/18-05/2-29631-317 և տրամադրվել է շինարարության թույլտվություն 27.04.2018թ N01/18-29631-373<br>7. **Շարունակվել են Ավան վարչական շրջանում Ծարավ Աղբյուրի փողոցին հարակից ուսումնա-մարզական համալիրի** շինարարական աշխատանքները, որի արդյունքում շահագործման կհանձնվեն Գեղասահքի մասնաշենքը, մարզաառողջարարական համալիրը, դպրոց և մանկապարտեզ: | | |
| 8. | Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնում | Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնման, այգիների և զբոսայգիների վերականգնման նպատակով կիրականացվեն աշխատանքներ մի շարք զբոսայգիներում՝<br>1. Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված այգու վերակառուցում,<br>2. Կոմիտասի անվան զբոսայգու հիմնանորոգման ուղղությամբ աշխատանքների իրականացում, | **1.Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված այգու վերակառուցում**<br>1.1.Իրականացվել է համագործակցություն «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հետ Երևան քաղաքի 2800-ամյակին նվիրված այգու բարեկարգման նպատակով:<br>Այգու բարեկարգման շխատանքները գտնվում են ընթացքի մեջ, այգին կհանձնվի շահագործման 2019թ.:<br>**2.Կոմիտասի անվան պանթեոնին հարակից այգու վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ**<br>Շահագործման է հանձնվել Կոմիտասի անվան 1.8հա զբաղեցնող զբոսայգին:Ստեղծվել են հանգստի համար հարմարավետ պայմաններ, իրականացվել են Արշակունյաց | Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ<br>հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 3. «Հաղթանակ» զբոսայգում միջազգային չափանիշներին համապատասխան հանգստի գոտու և զվարճանքի կենտրոնի ստեղծման հետ կապված բանակցությունների անցկացում ներդրող կազմակերպությունների հետ,<br>4. Միջազգային չափանիշներին համապատասխան Կենդանաբանական այգու վերակառուցման և զարգացման ծրագրերի շարունակականության ապահովում,<br>5. Հրազդանի կիրճի բարեկարգման ծրագիր՝ մարզական և մարմնակրթական բաղադրիչներով արկածային-զբոսաշրջային կենտրոնի ստեղծման ուղղությամբ ներդրումային առաջարկների իրագործման աշխատանքների իրականացում: | պողոտայի կողմից մուտքի հատվածի շինության թարմացման, նոր ճեմուղիների կառուցման, ոռոգման նոր ցանցի անցկացման աշխատանքներ: Ծրագրի շրջանակում այգում տեղադրվել են զբոսատաղավարներ, նստարաններ, մանկական խաղեր, կառուցվել է ջրավազան, հասարակական զուգարան: Հանգստի գոտին լուսավորվում է ժամանակակից էներգախնայող լուսատուներով: Զբոսայգին հարմարեցված է նաև հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար, տարբեր հատվածներում կառուցվել են թեքահարթակներ:<br>**3.Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի, Նոր Արեշ 50 և Գ. Մահարու փողոցների հատվածում քաղաքային զբոսայգու կառուցման աշխատանքներ**<br>Չորրորդ եռամսյակում շահագործման է հանձնվել Երևանում առաջին «խելացի» այգին:<br>«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հարակից տարածքում կառուցված այգին Բաղալյան ընտանիքի նվերն է Երևանի ծննդյան 2800-ամյակի առթիվ: Հիմնովին վերափոխված շուրջ 1 հա տարածք ունեցող հանգստի գոտին իր տեսակով առաջինն է Երևանում: Ծրագրի շրջանակում առանձնակի կարևորվել է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, այգին ունի արևային էներգիայով սնուցվող համակարգեր, որոնք կապահովեն գիշերային լուսավորությունը և, ընդհանրապես, այգու էներգամատակարարումը:<br>**4. Կատարվել են Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված այգու վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ.** հանգստի գոտում առկա շատրվանների արտաքին տեսքի թարմացում, նորոգում, ճեմուղիների վնասված սալիկների փոխարինում և կանաչ տարածքների պատշաճ խնամք ու ձևավորում:<br>**5.Հանգստի գոտի կազմակերպելու նպատակով Ավան վ/շ-ում Ծարավ-Աղբյուրի փողոց h.55/27 հասցեում մոտ 0.530195հա հողամասում ԵՊՀ շրջանավարտների միավորում ՀԿ-ին** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **տրամադրվել է** Շինարարության թույլտվություն 04.10.2018թ. N01/18-69047-1046, աշխատանքները նախատեսվում է ավարտել 2019թ.։<br>**Իրականացվել են աշխատանքներ հնարավոր ներդրողների հետ «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի և այլ վայրերում բարեկարգման և վերակառուցման ծրագրերի շուրջ։**<br>**Կենդանաբանական այգում իրականացվել են տարածքի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ։ Իրականացվել են ազատավանդակների մասնակի բարեկարգման աշխատանքներ։** | | |
| 9. | Երևանում միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների կառուցում | Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց ստեղծելու նպատակով Երևանում շարունակվելու են նախորդ տարիներից մեկնարկած ծրագրով միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների շինարարության հետ կապված աշխատանքները։ Ծրագրում ընդգրկված են՝<br>Արգավանդ-Շիրակ,<br><br>Դավթաշեն-Աշտարակ,<br><br>Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածները։ | **1.Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված**<br>Նախատեսվում է հայտարարել նոր մրցույթ։<br>**2.Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված**<br>Շինարարական աշխատանքներն ավարտվել են։<br>**3. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված**<br>N01/18-1751-28, տրված 22.01.2018թ. շինարարության թույլտվություն։ Աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ, ըստ սահմանված ժամանակացույցի։ Նախատեսվում է ավարտել 2020թ.։ | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10. | Տրանսպորտային հանգույցների կառուցում | Նախատեսվում է իրականացնել թվով 2 տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքները և մեկնարկել շինարարությունը՝<br>• Արշակունյաց պող. և Գ. Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ,<br>• Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ): | Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ: Նախագծային ընկերության կողմից ներկայացված լուծումը ստացել է Երևանի քաղաքապետարանի հավանությունը: Նախագիծը ավարտականացվում է՝ համաձայն հաստատված տարբերակի:<br>Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ): Առաջարկվել է ԱԶԲ-ի հետ քննարկել նշված հանգույցի փոխարեն դիտարկել կրկեսին հարակից հանգույցի նախագծի իրականացման հնարավորությունը: | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ | |
| 11 | Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի նախագծային աշխատանքների կազմակերպում | Նախատեսվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի նախագծային աշխատանքների կազմակերպում: Ճանապարհը կհանդիսանա նոր կառուցված փողոցի շարունակությունը: | Իրականացվել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի փակուղի միացնող ճանապարհի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ: | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ | |
| **Արտաքին ձևավորում և գովազդ** | | | | | |
| **Հ/հ** | **Ծրագրի կամ միջոցառման անվանումը** | **Նախատեսված աշխատանքների նկարագիր** | **Աշխատանքների իրականացման գործընթաց** | **Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ** | **Նշումներ** |
| 1. | Գովազդային վահանակների, արդիականացման, օրենքին | Նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում առկա գովազդային վահանակների, ցուցանակների արդիականացման, | Ապամոնտաժվել են թվով 575 հատ ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ և մոտ 9320 հատ քարոզչական պաստառներ:<br>Թվով 152 գովազդներ համապատասխանեցվել են | Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, վարչական շրջաններ, «Ձևավորում» ՓԲԸ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համապատասխանեցման աշխատանքներ | «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման աշխատանքներ, ինչպես նաև գովազդային վահանակնների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով: Կշարունակվեն աշխատանքները օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման ուղղությամբ, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: | օրենսդրության պահանջներին: | Հունվար-փետրվար | |
| 2. | Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքների իրականացում | 2016 թվականին ստեղծված էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքներ, որն իր հերթին կբարձրացնի գովազդի ոլորտի կառավարման արդյունավետությունը և կնպաստի տեղական տուրքերի հավաքագրմանը | Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով իրականացվել են Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, գույքագրման աշխատանքներ: Էլեկտրոնային կարգով տրվել է 7647 հատ թույլտվություն: | Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, վարչական շրջաններ<br><br>Հունվար-դեկտեմբեր | |
| 3. | Աշխատանքներ մասնագիտացված | Կշարունակվի մասնագիտացված գովազդային կազմակերպությունների | Մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ քննարկվել և իրականացվել են գովազդային | Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գովազդային կազմակերպությունների հետ | հետ՝ գովազդային վահանակների արդիականացման աշխատանքները: Սոցիալական գովազդների տեղադրումը կիրականացվի համայնքային կամ պետական հանձնաժողովի կողմից այդպիսին ճանաչվելուց հետո: | վահանակների արդիականացման, ինչպես նաև սոցիալական գովազդների տեղադրման աշխատանքներ: | վարչություն, գովազդային գործակալություններ<br><br>Հունվար-դեկտեմբեր | |
| 4. | Գովազդային վահանակների անձնագրերի կազմման աշխատանքներ | Կկազմվեն 100 շենքերի գովազդային անձնագրեր, որով կհստակեցվեն արտաքին գովազդի տեղադրման վայրերը, գունային լուծումները, ինչպես նաև գովազդային վահանակների արտաքին տեսքը և մակերեսները: | 29.03.18թ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/59<br>Պատրաստվել է թվով 100 շենքերի ճակատներին տեղադրվող գովազդների անձնագրեր: | «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ<br>Ապրիլ-դեկտեմբեր | |
| 5. | Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպում | Կանցկացվի արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոն: | 1.2018թ-ի նոյեմբերի 5-10-ը անցկացվել է գովազդի միջազգային ամենամյա փառատոնը:<br><br>25.04.18թ. ԵՔ- ԲՄԾՁԲ-18/105<br>2.Կազմակերպվել է Ձմերուկի 6-րդ ամենամյա փառատոնը: | 1.Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն,<br>Հոկտեմբեր-նոյեմբեր<br>2.«Թիմսերվիս» ՍՊԸ<br>Հուլիս | |
| 6. | Նախկինում վերանորոգված և գունազարդված կամարանցումների վնասված հատվածների նորոգման, թարմացման և թերությունների շտկման աշխատանքներ | Նախատեսվում է շարունակել արդեն իսկ վերանորոգված և գունազարդված կամարանցումների վնասված հատվածների նորոգման, թարմացման և թերությունների շտկման աշխատանքները: | 04.05.2018թ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/75<br>Վերանորոգվել է թվով 49 և գունազարդվել՝ թվով 54 կամարանցում: | «Ագարակ» ԲԲԸ<br>Երևանի գլխավոր դիզայներ<br>20.06.2018թ. | |
| 7. | Պանելային շենքերի ֆասադների | Կիրականացվի պանելային շենքերի ֆասադների դեկորատիվ | Աշխատանքը փոխարինվել է զարգացման ծրագրով չնախատեսված Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի | «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ<br>Երևանի գլխավոր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գունազարդում | գունազարդում: | տանիքների ներկման աշխատանքով:<br>Տե՛ս սույն ոլորտի 15-րդ կետում: | դիզայներ<br>20.09.2018թ. | |
| 8. | Բակային տարածքների գեղագիտական ձևավորում | Շարունակվելու է վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը, որի շրջանակներում վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարազարդման աշխատանքներ բակային տարածքներում: | Նկարազարդվել է թվով 61 բակային տարածք: | Վարչական շրջաններ<br>01.10.2019թ. | |
| 9. | Դեկորատիվ դիտահորերի պատրաստում և տեղադրում | Շարունակվելու է Երևան քաղաքի դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչների ձևավորման և տեղադրման գործընթացը: | Կազմվել են դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչների ձևավորման էսքիզային աշխատանքներ: | Երևանի գլխավոր դիզայներ | |
| 10. | Լանդշաֆտային ձևավորում | Նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում՝ նոր տիպի ծաղկամանների, բազրիքների, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատերի տեղադրում և այլն: | Կատարվել են Երևան քաղաքի վարչական շրջանների լանդշաֆտների դիզայնի փոփոխություն և նոր լանդշաֆտների դիզայնի շտկման աշխատանքներ՝ նվիրված Էրեբունի-Երևան 2800-ամյակին:<br>Կատարվել են նաև.<br>1. Կարապի լճին կից կանաչապատ տարածքի լանդշաֆտային ձևավորում:<br>2. ՀՀ Կառավարության 1 շենքի ներքին բակի խոտածածկույթի լանդշաֆտային ձևավորում:<br>3. Կարապի լճի տարածքում Մեգերյան ընկերության հետ համատեղ ձևավորվել, պատրաստվել և տեղադրվել է Վիշապագորգ:<br>4. Երևան քաղաքի կանաչապատ տարածքների ծաղկանոցների նախնական էսքիզային պլանավորում: | Աշխատակազմի բնապահպանության վարչություն, Երևանի գլխավոր դիզայնե Երևան քաղաքի վարչական շրջաններ<br>Հունվար-նոյեմբեր | |
| 11. | Փողոցների, հրապարակների, այգիների կահավորման | Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է համայնք-մասնավոր | 1.03.04.2018թ. № ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/20-1<br>Տեղադրվել են 485 հատ «Երևան» գրվածքով նստարան և 15 նստարան տրվել է ի պահ Երևանի քաղաքապետարանին:<br>2.09.04.2018թ. № ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/20-2 | 1.«Նիկոլ Դուման» ԱԿ<br>03.07.2018թ.<br>2.«Դան Մոն» ՍՊԸ<br>«Ատլանտ» ՍՊԸ-ի | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխատանքների իրականացում | հատված համագործակցության արդյունքում քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, նոր նստարանների, աղբամանների տեղադրում բոլոր վարչական շրջաններում՝ հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը: | Տեղադրվել են 411 հատ ձուլվածքով աղբամաններ և 189 հատ աղբաման ի պահ է հանձնվել Երևանի քաղաքապետարանին:<br>3.30.03.2018թ. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/20-3<br>Տեղադրվեն են 200 հատ մետաղյա դույլեր:<br>4.30.03.2018թ. № ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/19<br>Տեղադրվել են թվով 783 հասարակ նստարան, և թվով 17 նստարան ի պահ է հանձնվել Երևանի քաղաքապետարանին:<br>5.20.04.2018թ. № ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/21<br>Գնվել է թվով 74 նստարան և 70 հատ ձուլվածքով աղբաման ք. Ստեփանակերտի Ազատամարտիկների այգում տեղադրելու համար, գույքը տեղադրվել է վերը նշված վայրում: | (Կոնսորցիում)<br>09.07.2018թ.<br>3.«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ<br>30.06.2018թ.<br>4.«Գործ-555» ՓԲԸ<br>30.06.2018թ.<br>5.«Դան Մոն» ՍՊԸ «Ատլանտ» ՍՊԸ-ի (Կոնսորցիում)<br>01.10.2018թ. | |
| 12. | Քաղաքային կահավորանքի վերանորոգում և տեղադրում | Կնորոգվեն թվով 300 անվճար հայտարարությունների տախտակներ, փողոցների 100 ուղենիշներ, կիրականացվեն ծառաբների 35 մետաղական ծածկույթի պատրաստման և տեղադրման աշխատանքներ, կպատրաստվեն և կտեղադրվեն թվով 20 ցուցանակներ մշակութային շենքերի, տուն-թանգարանների ճակատային հատվատծներում: Կպատրաստվեն և կտեղադրվեն 50 շարժական դրոշակաիենքեր: Ամսական կտրվածքով նախատեսվում է իրականացնել 529 հիմնային պատվանդանների դրոշների փոխման, մաքրման և սպասարկման աշխատանքներ: | 1. 17.01.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/30<br>Վերանորոգվել է թվով 300 անվճար հայտարարությունների տախտակներ և փողոցների 100 ուղենիշներ:<br>2. 09.04.2018թ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/96<br>Պատրաստվել և տեղադրվել են թվով 35 մետաղական ծածկույթի ծառաբներ, տեղադրվել են մշակութային շենքերի տուն-թանգարանների ճակատային հատվածներում թվով 20 ցուցանակներ:<br>3. 06.08.18թ. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/27<br>Պատրաստվել է թվով 50 շարժական դրոշակաիենքեր:<br>4. 24.01.18թ. ԵՔ- ԲՄԾՁԲ-18/33<br>Ամենամսյա պարբերականությամբ իրականացվել է թվով 529 հիմնային պատվանդանների դրոշների փոխման, մաքրման և սպասարկման աշխատանքներ:<br><br>01.02.2018թ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/11<br>Կատարվել են հետյալ աշխատանքները՝<br>Նստարանի ամբողջական վերանորոգում՝ 100 հատ,<br>Նստարանի մասնակի վերանորոգում՝ 1620 հատ<br>Աղբամանի ամբողջական վերանորոգում՝ 200 հատ<br>Աղբամանի մասնակի վերանորոգում՝ 1600 հա | 1.«Էներջի գրուպ» ՍՊԸ<br>2.«Զորաշեն» ՍՊԸ<br>3.«Ինտերպրինտ» ՍՊԸ<br>4.«Ձևավորում» ՓԲԸ<br><br>«Նիկոլ Դուման» ԱԿ<br>01.12.2018թ. | |
| 13. | Մետաղյա | Կիրականացվեն մետաղյա | Աշխատանքը փոխարինվել է զարգացման ծրագրով | | : |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ | հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ: Արդյունքում մետաղյա հենասյուները զերծ կպահվեն գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներից, ինչպես նաև կպահպանվի սյան արտաքին մակերեսը կոռոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից: | չնախատեսված Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների ներկման աշխատանքով: Տե՛ս սույն ոլորտի 15-րդ կետում: | | |
| 14. | Քաղաքային միջոցառումների ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ | Կիրականացվեն դրոշակազարդման աշխատանքներ օտարերկրյա պատվիրարկությունների պետական և պաշտոնական այցերի ժամանակ: Նախատեսվում է լայնածավալ դրոշակազարդարման և ձևավորման աշխատանքներ իրականացնել Մայիսի 28-ին նվիրված Առաջին Հանրապետության 100-ամյակին: Նախատեսվում է իրականացնել մի շարք մշակութային միջոցառումների ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ (Բանակի օր, Սուրբ Սարգիս, Մայիսի 1, Մայիսի 9, Մայիսի 28, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության օր, Երևանյան ամառ, Սահմանադրության օր, Անկախության օր, Ուսուցչի օր, Ամանորյա տոնակատարություններ և այլն): Նախատեսվում է «Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնական | 24.01.18թ. ԵՔ- ԲՄԾՁԲ-18/33<br>1. Իրականացվել են օտարերկրյա նախագահների պատվիրակությունների պետական այցերի դրոշակազարդման աշխատանքներ:<br>22.01.18թ. ԵՔ- ԳՀԾՁԲ-18/44<br>2. Իրականացվել են Սուրբ Սարգսի օրվան նվիրված ձևավորման աշխատանքներ:<br>26.01.18թ. ԵՔ-ԳՀԾՁԲ-18/48<br>3. Իրականացվել են Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառման ձևավորման աշխատանքներ:<br>16.01.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10<br>4. Իրականացվել են Մայիսի 1-ին, Մայիսի 9-ին, Սահմանադրության, Վերջին զանգի, երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումների դրոշակազարդման և ձևավորման աշխատանքներ, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության հիշատակման միջոցառումների ձևավորման աշխատանքներ:<br>22.01.18թ. ԵՔ-ԳՀԾՁԲ-18/44<br>5 Իրականացվել են կանանց միամսյակին և մայիսի 28-ին՝ նվիրված տոնական միջոցառումների դրոշակազարդման և ձևավորման աշխատանքներ:<br>09.04.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/83-3 | 1.«Ձևավորում» ՓԲԸ<br>2.«Ինտերպրինտ» ՍՊԸ<br>3. «Ինտերպրինտ» ՍՊԸ<br>4. «Ձևավորոմ» ՓԲԸ<br>5. «Էներջի գրուպ» ՍՊԸ<br>6. «Թիմսերվիս» ՍՊԸ<br>7. «Շինպլատֆորմ» ՍՊԸ<br>8.«Թիմսերվիս» ՍՊԸ<br>9. «Ինտեր պրինտ» ՍՊԸ<br>«ԹԻՄՍԵՐՎԻՍ» ՍՊԸ<br>10. «Բրուս» ՍՊԸ<br>11. «ԹԻՄՍԵՐՎԻՍ» ՍՊԸ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոբելյանական մի շարք միջոցառումների շրջանակներում քաղաքի մեծածավալ ձևավորում և ինստալիացիոն աշխատանքների իրականացում: | 6.Իրականացվել են Երևանյան ամառ ծրագրի շրջանակում կազմակերպված միջոցառումների ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ:<br>17.04.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/98<br>7. Իրականացվել է ՀՀ անկախության օրվան նվիրված դրոշակազարդման աշխատանքներ:<br>11.04.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/97<br>8. Իրականացվել են Ուսուցչի օրվան նվիրված տպագրման աշխատանքներ:<br>23.05.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ 18/106-2<br>25.04.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/105<br>9.Իրականացվել են Էրեբունի-Երևան 2800 ամյակին նվիրված միջոցառումների դրոշակազարդման և ձևավորման աշխատանքներ:<br>14.08.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ 18/116<br>10. Իրականացվել են գլխավոր տոնածառի և վարչական շրջանների տոնածառերի տեղադրման աշխատանքներ:<br>23.05.18թ. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/106-1<br>11. Իրականացվել են Ամանորյա ձևավորման աշխատանքներ | | |
| 15 | Բազմաբնակարն շենքերի տանիքների ներկում | | 12.04.2018թ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/75<br>Իրականացվել են Թամանյան 1, 1ա, 2, 2ա, 3, 4, 5, 6, Իսահակյան 38 շենքերի տանիքների 8895.5 քառ. մետր ծավալով ներկման աշխատանքներ: | «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ Երևանի գլխավոր դիզայներ<br>20.09.2018թ. | |

## Շինարարություն և բարեկարգում

| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Փողոցների, բակային տարածքների և մայթերի ընթացիկ ասֆալտապատում | Փողոցների պատշաճ վիճակը պահպանելու նպատակով կիրականացվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-3<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-4 | 1.«Խաչհար» ՍՊԸ<br>2.«Սահակյանշին» ՓԲԸ<br>3. «Կապավոր» ՍՊԸ<br>4.«Նարիմանյան» ՍՊԸ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Փողոցների ա/բ ծածկի փոսային նորոգում | նորոգման և շուրջ 400 հազ. քմ ճաքալցման աշխատանքներ: Ասֆալտապատման աշխատանքները կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, մայթերում, բակերում և գրունտային ճանապարհներին: Նախատեսվում է իրականացնել շուրջ 750 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում: Նախատեսվում է նաև շուրջ 5000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-5<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-6<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-7<br>Կատարվել է ընդհանուր 710655քմ ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման և փոսային նորոգման աշխատանքներ: | 5.«Լիլիթ-87» ՍՊԸ<br>6. «Շինպլյուս» ՍՊԸ<br>7. «Շիրինշին» ՍՊԸ<br>04.05-01.10.2018թ. | |
| | Փողոցների հիմնանորոգում | | Կատարվել են նաև հետևյալ փողոցների հիմնանորոգման աշխատանքները.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/69<br>1.Մոսկովյան փողոցի հիմնանորոգում<br>(Նալբանդյան փողոց-Մաշտոցի պողոտա հատված)<br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/26<br>2.Մաշտոցի պողոտա-Գր.Լուսավորիչ տրանսպորտային հանգույցի թունելային հատվածի բարեկարգում<br>ԵՔ-ՄԱ-ԱՇՁԲ-18/1<br>3.«Զվարթնոց» օդանավակայանից Արգավանդի կամուրջ ճանապարհահատվածի բարեկագում և դիզայներական ձևավորում: | 1.«Նարիմանյան» ՍՊԸ<br>09.04.-09.07.18թ.<br><br>2.«ԱԲԱԿ» ՍՊԸ,<br>15.05-15.07.18թ.<br><br>3.«ՍԱՄ ԿԱՐ Շին» ՍՊԸ<br>30.05.-01.09.18թ. | |
| 3. | Փողոցների ա/բ ծածկի ճաքալցում | | հ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-1<br>Կատարվել է 402187քմ ճաքալցման աշխատանքներ: | «ԽաչՀար» ՍՊԸ-ի<br>04.05-01.10.2018թ. | |
| 4. | Գրունտային ճանապարհների նորոգում | | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-8<br>Կատարվել է 5007քմ հողային պաստառով փողոցների ասֆալտապատման աշխատանքներ: | «Նարիմանյան» ՍՊԸ<br>04.05-01.10.2018թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Հենապատերի նորոգում | Նախատեսվում է շարունակել հենապատերի վերանորոգման աշխատանքները: Առկա հասցեներից կընտրվեն առավել հրատապները և առաջնահերթերը: Կիրականացվեն նաև հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/9<br>Վերանորոգվել են թվով 42 հենապատեր: | «Երկնաքեր» ՍՊԸ, 31.01.-30.10.18թ. | |
| 6. | Վերգետնյա անցումների կառուցում | Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ վարձակալների հետ համագործակցությամբ:<br>Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է կառուցել վերգետնյա անցումներ: 2018թ. համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ նախատեսվում է իրականացնել թվով 5 վերգետնյա անցումների կառուցման ծրագիր: | 2019թ. բյուջեով գումար չի նախատեսվել աշխատանքների իրականացման համար: | | |
| 7. | Թեքահարթակների կառուցում | 2018թ. նախատեսվում է կառուցել շուրջ 120 թեքահարթակ, կտեղադրվեն նաև վատ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ սալիկներ: Թեքահարթակների կառուցման ծրագիրը շարունակական է: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/12<br>Կառուցվել են թվով 200 թեքահարթակներ և տեղադրվել են 48 հատուկ դեղին գույնի գոգավոր սալիկներ՝ թույլ տեսողություն ունեցող քաղաքացիների համար:<br>Մասնավորապես.<br>Աջափնյակ վարչական շրջանում-6 հատ,<br>Արաբկիր -70 հատ,<br>Էրեբունի - 29 հատ,<br>Կենտրոն - 27 հատ,<br>Մալաթիա-Սեբաստիա -20 հատ,<br>Նոր Նորք - 28 հատ,<br>Շենգավիթ - 14 հատ,<br>Քանաքեռ-Զեյթուն - 6 հատ: | «Կոտայք Շին» ՍՊԸ, 07.02.-01.08.18թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հատուկ դեղին գոգավոր սալիկները տեղադրվել են.<br>Աջափնյակ վարչական շրջանում-13 հատ,<br>Կենտրոն -20 հատ,<br>Նոր Նորք - 5 հատ,<br>Շենգավիթ - 8 հատ,<br>Քանաքեռ-Զեյթուն - 2 հատ: | | |
| 8. | Մայթերի և եզրաքարերի վերանորոգում | Նախատեսվում է շարունակել մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքները 2017 թվականին իրականացված ծավալների չափով: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/8<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/10<br>Կատարվել է 361.95 գծմ նոր եզրաքարերի տեղադրման և 715.81 գծմ հնի վերատեղադրման, 5270.2քմ բետոնե, 93.9քմ բազալտե և 7.3քմ տրավերտինե մայթի սալիկների տեղադրման աշխատանքներ | «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ, 06.03.-30.10.18թ.<br>«Արա-Արաքս Գրուպ» 31.01.-30.10.18թ. | |
| 9. | Կամուրջների, կամրջային կառուցվածքների շահագործում | Կշահագործվեն և սպասարկման ծառայություններ կմատուցվեն մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների համար: | ԵՔ-ԲՄԾՁԲ-18/11<br>Իրականացվել է 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների շահագործում և սպասարկում: | «Կամուրջշին» ՓԲԸ, 29.12.17թ.-31.12.18թ. | |
| 10. | Շենքերի վթարային պատշգամբների նորոգման աշխատանքներ | Կվերանորոգվեն շուրջ 190 վթարային շքապատշգամբներ: | Վերանորոգվել են թվով 139 շքապատշգամբներ.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-1<br>1.Աջափնյակ վարչական շրջան-22 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-3<br>2. Արաբկիր վարչական շրջան -20 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-2<br>3. Ավան վարչական շրջան-14 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-1<br>4. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան -20 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-1<br>5. Նոր Նորք վարչական շրջան -22 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-3<br>6. Շենգավիթ վարչական շրջան -22 հատ,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/66-3<br>7. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան- 19 հատ: | 1.«Սասունասար» ՍՊԸ<br>2. «Էլդոզար» ՍՊԸ<br>3. «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ<br>4. «Սասունասար» ՍՊԸ<br>5. «Սասունասար» ՍՊԸ<br>6. « Էլդոզար» ՍՊԸ<br>7. «Էլդոզար»» ՍՊԸ<br>20.04-01.08.18թ. | Բյուջեով նախատեսվել է 147 պատշգամբի վերանորոգում, սակայն Ավան վարչական շրջանում 5 հասցեներում բնակիչները հրաժարվել են Նոր Նորքի 1-ում և Աջափնյակի 2-ում առաջացել են պատշգամբներին մոտեցման խնդիրներ և հնարավոր չի եղել կատարել վերանորոգման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքներ: Արդյունքում վերանորոգվել են 139 պատշգամբներ: |
| 11. | Հանգստի գոտիների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում | 2018 թվականին բակային տարածքների բարեկարգման ծրագրերը կլինեն շարունակական և կիրականացվեն առնվազն 2017 թվականին իրականացված ծավալներով: Նախատեսվում է թվով 5 հանգստի գոտիների բարեկարգում՝<br>• Կոմիտասի անվան զբոսայգի,<br>• Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված այգի (համայնք-մասնավոր հատված համագործակցութուն),<br>• Ծարավ Աղբյուրի փողոցում՝ նոր թաղամասի հարակից տարածքում այգու կառուցում (Ծարավ Աղբյուրի 55/27),<br>• Էրեբունի և Նոր Նորք վարչական շրջաններում մեկական հանգստի գոտու կառուցում: | Բարեկարգվել է թվով 59 բակ:<br>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/152<br>1. Երևանի 2750-ամյակի շատրվանների տարածքի բարեկարգման աշխատանքների համար կատարվել են անհրաժեշտ նյութերի ձեռքբերման աշխատանքներ: Տարածքի բարեկարգման աշխատանքներն ավարտվել են:<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/80<br>2. Բարեկարգվել է Կոմիտասի անվան զբոսայգին:<br>3. Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի, Նոր Արեշ 50 և Գ. Մահարու փողոցների հատվածում կառուցվել է նոր զբոսայգի:<br>4. Իրականացվել է Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված այգու բարեկարգման աշխատանքներ:<br>5. Նոր Նորք վարչական շրջանում բարեկարգվել է բակային տարածքում գտնվող պուրակը: | 1. «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ, 12.04-02.05.18թ.<br>2. «Արալյլաստ» ՍՊԸ, 26.06.-30.08.18թ.<br>3.Համայնք-մասնավոր հատված համագործակցություն (Բաղալյան ընտանիք)<br>4. «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ | Ծարավ Աղբյուրի փողոցում՝ նոր թաղամասի հարակից տարածքում այգու կառուցման աշխատանքները չեն իրականացվել տարածքի օտարման պատճառով: |
| 12. | Մինի ֆուտբոլի դաշտերի ստեղծում | Նախատեսվում է կառուցել 6 մինի ֆուտբոլի դաշտ: | Կառուցվել են թվով 5 մինի-ֆուտբոլի դաշտեր.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/34-1<br>1. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինա 2-րդ նրբ, հ.121 դպրոցի բակում, | 1.«Շինհայ-ՊՌ» ՍՊԸ, 22.02-15.06.18թ.<br>2. «Բիլդինգ Գրուպ» 22.02-15.06.18թ. | Բյուջեով հաստատվել է 5 մինի ֆուտբոլի դաշտի կառուցումը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/34-2<br>2.Էրեբունի՝ Խաղաղ Դոնի հ.27 շենքի բակում,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/77<br>3. Դավթաշենի 3-րդ թաղամասում,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/38<br>4. Շենգավիթ՝ Նորագավիթ թաղամասի 8-րդ փողոցի հարակից տարածքում,<br>5. Նոր Նորք՝ Նանսենի 21/3 շենքի հարակից տարածքում: | 3. «Ռադիկ Շին» ՍՊԸ<br>31.05-15.07.18թ.<br>4, 5, «Շինհայ-ՊՈ» ՍՊԸ<br>25.09-25.10.18թ. | |
| 13. | Մանկապարտեզների հիմնանորոգում | 2018թ. ծրագրով վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում Երևանի ենթակայության շուրջ 39 մանկապարտեզներում:<br>ՄԱԶԾ հետ համագործակցությամբ կիրականացվի Էրեբունի վարչական շրջանի թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ամբողջական հիմնանորոգման ծրագիրը: | Հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 14 մանկապարտեզներում.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/50<br>1.Արաբկիրի հ.29<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/50<br>2. Արաբկիրի հ.30<br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32-1<br>3. Ավանի հ.57<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46-1<br>4. Կենտրոնի հ.6,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46-2<br>5. Կենտրոնի հ.9,<br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/33<br>6.Կենտրոնի հ.13,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46-1<br>7. Կենտրոնի հ.16,<br>8. Կենտրոնի հ.18,<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/56<br>9. Մալաթիա-Սեբաստիայի հ.96<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/47<br>10. Նուբարաշենի մանկապարտեզ<br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32-2<br>11. Շենգավիթի հ.134<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/51-1<br>12. Քանաքեռ-Զեյթունի հ.149<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/51-2 | 1.«Էլդոգար» ՍՊԸ<br>28.03.-30.06.18թ.<br>2. «Էլդոգար» ՍՊԸ:<br>28.03.-30.07.18թ.<br>3. «Դավիթշին» ՍՊԸ 07.09.-06.11.18թ.<br>4. «Արա-Արաքս Գրուպ»<br>22.03.-05.06.18թ.<br>5.«Մեծ Հիմք» Ա/Կ<br>22.03.- 25.06.18<br>6. «Վահրամ Առաջին» ՍՊԸ,<br>02.10.-22.10.18թ<br>7.«Արա-Արաքս Գրուպ»<br>22.03.-30.06.18թ.<br>8. «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ 22.03.-05.06.18թ.<br>9. «Մեծ Հիմք» Ա/Կ<br>լուծվել է<br>10. «ԼԵՎ» ՍՊԸ<br>15.03.-30.08.18թ.<br>11. «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ,<br>06.09.-06.11.18թ<br>12. «Էլդոգար» ՍՊԸ<br>30.03.-05.06.18թ.<br>13. «Վիգիշինա» ՍՊԸ<br>30.03.-05.06.18թ.<br>14. «Էլդոգար» ՍՊԸ | Բյուջեով նախատեսված գումարի շրջանակներում նախատեսվող աշխատանքը փոփոխվել և փոխարենը կատարվել է թվով 22 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ, որից 7-ում վերանորոգվել և բարեկարգվել են նաև բակային տարածքները, իսկ 1-ում՝ կատարվել են ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 13. Քանաքեռ-Զեյթունի հ.152<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/51-1<br>14. Քանաքեռ-Զեյթունի հ.158<br><br>Թվով 7 մանկապարտեզներում կատարվել են վերանորոգման և բակերի բարեկարգման աշխատանքներ.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/81-2<br>1. Արաբկիրի հ.31<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/81-3<br>2. Արաբկիրի հ.32<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/81-1<br>3. Դավթաշենի հ.60<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/82-2<br>4.Էրեբունու հ.66<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/81-1<br>5. Կենտրոնի հ.2<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/82-2<br>6.Կենտրոնի հ.8<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/81-1<br>7.Մալաթիա-Սեբաստիայի հ.89 մանկապարտեզներում:<br><br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/49<br>Կատարվել է Նոր Նորք վարչական շրջանի հ.117 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները:<br><br>ՄԱԶԾ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի համաֆինանսավորմամբ հիմնանորոգվել է Էրեբունի վարչական շրջանի հ.3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը: | 30.03.-30.08.18թ.<br><br><br><br><br><br>1.«ԳԵՎ Էլ Պլաստ» ՍՊԸ<br>2. «ՍՄԱԼԱ» ՍՊԸ<br>3. «Էլդոգար» ՍՊԸ<br>4. «ԳԵՎ Էլ Պլաստ» ՍՊԸ<br>5.«Էլդոգար» ՍՊԸ<br>6.«Արա-Արաքս Գրուպ»<br>7. «Էլդոգար» ՍՊԸ<br>26.06-30.08.18թ.<br><br><br><br><br><br><br>«Վ ԵՎ Ա» ՍՊԸ<br>01.11.-20.12.18թ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14. | Երևան քաղաքի փողոցներում աղբամանների և կոնտեյներների տեղադրման համար հարթակների կառուցման աշխատանքներ | 2018թ. նախատեսվում է կառուցել 226 հարթակ: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ18/65<br>Կառուցվել է աղբամանների և կոնտեյներների տեղադրման համար նախատեսված 206 հարթակ: | «Որդի Հրայր» ՍՊԸ<br>Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն ապրիլ | Գույքագրման արդյունքում 2018թ. անհրաժեշտ է եղել նման թվաքանակով հարթակների կառուցում: |
| 15. | Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում | Նախատեսվում է իրականացնել Երևանի ենթակայության շուրջ 15 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներ: | Կատարվել են թվով 10 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներ.<br>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1 «Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ<br>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-2 «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-2 «Թիվ 9 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1 «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-3 «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-4«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>7. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>8.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-5«Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ,<br>9. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/72-1 «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>10. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/72-2 «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ | 1. «Արտշին 1» ՍՊԸ<br>2.«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ<br>3.«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ<br>4. «Արտշին 1» ՍՊԸ<br>5. «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ<br>6. «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ<br>7. «Արտշին 1» ՍՊԸ<br>8. «Սմալա» ՍՊԸ<br>15.03.-30.08.18թ.<br>9. «ԳԵՎ Էլ Պլաստ» ՍՊԸ<br>10. «Աննա-80» ՍՊԸ<br>02.05.-30.08.18թ. | Բյուջեով հաստատվել է թվով 10 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքները: |
| 16. | Ջրային կառույցների վերականգնման ծրագիր | Նախատեսվում է շարունակել ջրային կառույցների վերականգնման ծրագիրը: 2018թ. շարունակվելու են մայրաքաղաքի 35 ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները:<br><br>Կիրականացվի բարեկարգման կարիք ունեցող շատրվանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ | ԵՔ-ԲՄԾՁԲ-18/9<br>Իրականացվել են 2018թ. ծրագրով իրականացվող մայրաքաղաքի 35 ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներ: | «Ջրային կառույցների» ՓԲԸ,<br>28.12.17թ.-31.12.18թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով: | | | |
| 17. | Հուշարձանների պատվանդանների վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ | Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են տարածքների բարեկարգման, հուշարձանների լվացման և պատվանդանների վերանորոգման աշխատանքներ: | ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/79<br>Հաշվի առնելով, որ ծրագրով նախատեսված էին ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ ուսումնասիրությունների արդյունքում այն հուշարձանների տարածքներում, որտեղ թերությունների վերացման կարիք կար, անհրաժեշտ էին հիմնանորոգման աշխատանքներ, որը հնարավոր չէր իրականացներ նախատեսված ծավալների շրջանակներում: | «Աննա-80» ՍՊԸ<br>14.06.-30.10.18թ. | |
| 18. | 3-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքներ | Նախատեսվում է իրականացնել Գ. Նժդեհի h. 56ա շենքի վերականգնման-ամրացման, ինչպես նաև Ֆուչիկի h. 23 շենքի ամրացման աշխատանքները: | Կատարվել են թվով 2 երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքները.<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/1<br>1.Գ.Նժդեհի h.56ա շենք<br>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/2<br>2.Ֆուչիկի h.23 շենք | «Սյունիք« ՍՊԸ<br>18.12.17թ.-29.05.18թ.<br><br>«Էլդոզար» ՍՊԸ,<br>22.01.-22.05.18թ | |
| **Անշարժ գույքի կառավարում** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկներ ի) կարիքավոր ընտանիքներին բնակարանային կարիքավորության հաշվառման | ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» h. 947-Ն որոշման համաձայն՝ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների և ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային կարիքավորության հաշվառման վերցնելու և ցուցակները ՀՀ | ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի <<Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> h.947-Ն և 10.08.2017թ. h.1016-Ն որոշումների համաձայն քաղաքացիների դիմումների հիման վրա վարչության կողմից ուսումնասիրվել են զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային պայմանների կարիքավոր հանդիսացող ընտանիքների թվով 74 գործեր, որոնք ներկայացվել են բնակարանային հարցերի հանձնաժողովի քննարկմանը: Արդյունքում, թվով 7 գործեր, | Աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչություն<br>Հունվար դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վերցնելու և ցուցակները ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացնելու աշխատանքներ | պաշտպանության նախարարություն ներկայացնելու գործընթացի կազմակերպում: | որոնք համապատասխանել են նշված որոշումներով սահմանված չափորոշիչներին, սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն: | | |
| 2. | Նոր բազմաբնակարան շենքի կառուցման ծրագիր | Մեկնարկել նոր բազմաբնակարան շենքի կառուցման ծրագիր՝ Երևան քաղաքում 2015-2017 թվականների ընթացքում հաշվառված քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.8 և հ.10, Կողբացու փողոց հ.41 և Շիրակի փողոց հ.60 բազմաբնակարան և հանրակացարանային շենքերից՝ ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 և 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» հ.172-Ն որոշումների շրջանակներում բնակիչների վերաբնակեցման գործընթաց իրականացնելու նպատակով: | Միսակյան փողոցի հ.3 չորրորդ կարգի վթարային քանդված շենքի տեղում իրականացվում է նոր բազմաբնակարան շենքի կառուցում՝ Երևան քաղաքում 2015-2018 թվականների ընթացքում հաշվառված քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում | Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում: | Կայացվել են Երևանի քաղաքապետի թվով 85 որոշումներ ոչ բնակելի տարածքները վարձակալությամբ տրամադրելու մասին:<br>Մշտական հսկողություն է սահմանված վարձակալած տարածքների օգտագործողների և վարձավճարների փոփոխության ուղղությամբ: | | |
| 4. | Վթարայնության աստիճան ունեցող շենքերի կրկնակի հետազոտություն | Նախատեսվում է նաև համապատասխան լիցենզավորված կազմակերության միջոցով պատվիրել արդեն իսկ վթարայնության աստիճան ունեցող շենքերի կրկնակի հետազոտություն: | Կրկնակի հետազոտություն է իրականացվել վթարայնության աստիճան ունեցող Արզումանյան փողոցի հ.10 շենքում: | | |
| 5. | Դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում: | «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, սակայն դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ | <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>>, <<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 29.05.2009թ. հ.604-Ն որոշման հիման վրա գույքագրվել և պետական գրանցում է կատարվել Երևան համայնքի սեփականությունը համարվող թվով 77 գույքային միավորների նկատմամբ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում: | | | |
| 6. | Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ակտիվ շահագործման փուլում չգտնվող գույքի օտարման գործընթացի իրականացում | Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ակտիվ շահագործման փուլում չգտնվող գույքի օտարման գործընթացի իրականացում: | Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 12-ի հ.հ.1541-Ն և 1540-Ն որոշումների հիման վրա Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու, օտարման աճուրդի և մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում գումարվել են գույքի օտարման՝ թվով 6 և հողի օտարման աճուրդների թվով 20 նիստեր, որոնց արդյունքում օտարվել են թվով 92 հողամասեր և թվով 15 գույքեր: Բոլոր գույքերի մասով նախապատրաստվել և կազմվել են համապատասխան պայմանագրեր: | | |
| 7. | Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակելի շենքերում քաղաքացիների կողմից զբաղեցրած բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացի կազմակերպում | Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակելի շենքերում քաղաքացիների կողմից զբաղեցրած բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացի կազմակերպում: | Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի <<Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2018 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.87-Ն որոշմամբ հաստատված հավելվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոնների հիման, վրա վարչական շրջանների հետ համատեղ նախապատրաստել են բնակարաններն անհատույց օտարելու մասին Երևանի քաղաքապետի որոշման նախագծեր և արդյունքում կայացվել են Երևանի քաղաքապետի թվով 70 որոշումներ՝ բնակարաններն անհատույց օտարելու մասին: | | |
| 8. | Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը | Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող շենք, շինությունների գործառական նշանակությունների | ՀՀ կառավարության 02.02.2002թ. հ.88, 19.03.2015թ. հ.596-Ն, 15.12.2005թ. հ.2330-Ն և 29.12.2011թ. հ.1920-Ն որոշումների հիման վրա վարչության կողմից մշակված նախագծերի հիման վրա կայացվել է անշարժ գույքի գործառական, ինչպես | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հանդիսացող շենք, շինությունների գործառական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը | համապատասխանեցում փաստացի օգտագործմանը: | նաև հողամասի գործառնական ու նպատակային նշանակությունների փոփոխման վերաբերյալ Երևանի քաղաքապետի թվով 111 որոշում, ինչը հնարավորություն է տվել գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի վճարի չափը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը: | | |
| 9. | Աջակցության ցուցաբերում Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում | Համապատասխան աջակցության ցուցաբերում Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում: | Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է համապատասխան աջակցություն՝ կապված Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում հողամասերի օտարման գործընթացի հետ, որի արդյունքում կայացվել է Երևանի քաղաքապետի թվով 6 որոշում: | | |
| 10. | Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման աշխատանքների իրականացում | Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման աշխատանքների իրականացում: | ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ, 64-րդ, 16-րդ հոդվածների, քաղաքացիական օրենսգրքի դրույթների համաձայն իրականացվել են նախկինում սեփականաշնորհված, սակայն օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունքներ չձևակերպված թվով 75 գույքային միավորների հիմքերի վերականգնման, սահմանների ճշտման, ինչպես նաև վերաճշտման աշխատանքներ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. | Երևան քաղաքի թաղամասերում տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում | Երևան քաղաքի նախկին` Հաղթանակ, Չարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Ջրաշեն, Մուշական և Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում: | <<Պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին>> հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն իրականացվել են Երևան քաղաքի` Հաղթանակ, Չարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Ջրաշեն, Մուշական, Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման աշխատանքներ, որի արդյունքում կայացվել են Երևանի քաղաքապետի թվով 60 որոշումներ: | | |
| 12. | Նախկինում կնքված հողամասերի, ինչպես նաև շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին | Նախկինում կնքված հողամասերի, ինչպես նաև շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին: | Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի <<Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2018 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.87-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների համաձայն, որը սահմանում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը` քաղաքացիների դիմումների հիման վրա, վարչական շրջանների հետ համատեղ, նախապատրաստվել են Երևանի քաղաքապետի թվով 762 որոշման նախագծեր` կապված վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի համար կնքված պայմանագրերի գործողության ժամկետների երկարացման, ինչպես նաև շինարարական աշխատանքներն իրականացնելու համար շինարարական հրապարակի կազմակերպման նպատակով առանձնացվող հողամասը վարձակալությամբ տրամադրելու հետ: Արդյունքում Երևանի քաղաքապետի կողմից ընդունած որոշումների հիման վրա նախապատրաստվել և կազմվել են համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր: | | |
| 13. | Երևան համայնքի | Երևան համայնքի սեփականություն | <<Քաղաքաշինություն>> ՓԲԸ-ի միջոցով Երևան համայնքի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | սեփականությունը համարվող գույքային միավորների հաշվառում, չափագրում, գույքագրում և համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման ուղղությամբ աշխատանքների իրականացում | համարվող գույքային միավորների հայտնաբերման, հաշվառման, չափագրման, գույքագրման և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում: | սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրականացված չափագրման աշխատանքների արդյունքում չափագրվել են թվով 72 գույքային միավորներ: | | |
| **Կոմունալ ոլորտ** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդելի ներդրում | «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո նախատեսվում է ներդնել բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդել, որը կապահովի գործառույթների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ: | «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը հանվել է շրջանառությունից: | | |
| 2. | Վերելակային տնտեսության արդյունավետ կառավարման ծրագրի մշակում | Պետություն–համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում կմշակվի վերելակային տնտեսության արդյունավետ կառավարման ծրագիր, որով | Իրականացվել են վերելակային տնտեսության արդիականացման ծրագրի մշակման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում: | Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն<br>Աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կնախատեսվի վերելակային տնտեսության ամբողջական արդիականացում և միջազգային չափորոշիչներին համապատասխան անվտանգ սպասարկում: | | վարչություն | |
| 3. | Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում | Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 1615 շքամուտք: | Փաստացի վերանորոգվել է 1190 մուտք:<br>Որից՝ Աջափնակ-143, Ավան-55, Արաբկիր-116, Դավթաշեն-50, Էրեբունի-115, Կենտրոն-192, Մալաթիա-Սեբաստիա-111, Նոր Նորք-83, Նուբարաշեն-13, Շենգավիթ-185, Քանաքեռ-Զեյթուն-127: | Վարչական շրջաններ Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ | |
| 4. | Բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում | Կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 81000քմ հարթ և 43000քմ թեք տանիքների վերանորոգում: | Փաստացի վերանորոգվել է 94135 քմ հարթ և 41007 քմ թեք տանիք:<br>Հարթ տանիք որից՝ Աջափնակ-6824քմ, Ավան-14106քմ, Արաբկիր-8787քմ, Դավթաշեն-10300քմ, Էրեբունի-9660քմ, Կենտրոն-10225քմ, Մալաթիա-Սեբաստիա-10399քմ, Նոր Նորք-12354քմ, Շենգավիթ-5070, Քանաքեռ-Զեյթուն-6410:<br>Թեք տանիք որից՝ Աջափնակ-6738, Ավան-1200, Արաբկիր-5058, Դավթաշեն-12, Էրեբունի-3389, Կենտրոն-4176, Մալաթիա-Սեբաստիա-795, Նոր Նորք-5953, Նուբարաշեն-2510, Շենգավիթ-6990, Քանաքեռ-Զեյթուն-4186: | Վարչական շրջաններ Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ | |
| 5. | Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացում | Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի և ՀՀ Երևան համայնքի միջև 2014թ. փետրվարի 20-ին և դեկտեմբերի 22-ին կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում կիրականացվի բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: | 2018թ. փետրվար, մարտ, մայիս և հունիս ամիսներին Նոր Նորք, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում համատիրության ներկայացուցիչների համար կազմակերպվել են դասընթացներ՝ ուղղված բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը:<br>Նոր Նորք վարչական շրջանի Բորյան փող. հ.6, Շենգավիթ վարչական շրջանի Ն. Շենգավիթ 11-րդ փողոցի հ.37/2,<br>Աջափնյակ վարչական շրջանի 16-րդ թաղամաս հհ.24, 31, 33, Կենտրոն վարչական շրջանի Աբովյան հ.26, Հանրապետության հ.78, Հերացի հ.10, Հերացի հ.16, Նալբանդյան հ.7, Վարդանանց հ.15, Մալաթիա-Սեբաստիա | Համատիրություններ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վարչական շրջանի Շերամի փող. հ.79 շենքերում իրականացվել են ընդհանուր օգտագործման տարածքների (մուտքերի, տանիքի) վերանորոգման աշխատանքներ:<br>Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի փող. հհ.9, 10 և Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փող. հ.3 շենքերում իրականացվել են էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: | | |
| 6. | Նոր աղբավայրի կառուցում | Նոր աղբավայրի ամբողջ տարածքը նախատեսված է կառուցել 8.8մլն մ³ աղբի ծավալի համար: Երևան քաղաքում տարեկան 300 հազար տոննա աղբի գնահատված ծավալի պարագայում կապահովվի շուրջ 28 տարի շահագործում: Աղբի ծավալների փոփոխությամբ պայմանավորված, մասնավորապես աղբի վերամշակման արդյունքում, աղբավայրի շահագործման ժամկետը կավելանա: Նոր աղբավայրը կծառայի Երևան քաղաքին և հարակից 4 համայնքներին:<br>2018 թվականին կմշակվի նաև աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման և արդյունավետ շահագործման ծրագիր, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում: Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավմանը զուգահեռ նախատեսվում է մեկնարկել Երևան քաղաքում նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման | Կազմվել և հայտարարվել է նոր աղբավայրի կառուցման ծրագրի մրցույթը: Մրցութային հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2019 թվականի մարտի 29-ը:<br>Նոր աղբավայրի կառուցումն ու գործող աղբավայրի փակումը իրականացվելու է մեկ ծրագրի շրջանակներում: | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ծրագիրը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է Նուբարաշենի գործող աղբավայրի հարակից տարածքում կառուցել նոր, միջազգային չափորոշիչներին համապատասխան աղբավայր՝ բոլոր ենթակառուցվածքներով, ինչպես նաև մեկուսացնել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը, կառուցել արտանետվող գազերի հավաքման և այրման կայան, տեղադրել գեներատոր էլեկտրաէներգիայի ստացման համար: | | | |
| 7. | Աղբահանություն և սանիտարական մաքրում | Միջոցներ կձեռնարկվեն աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավման, ինչպես նաև չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը կանխելու և բացառելու ուղղությամբ: | Իրականացվում են ամենօրյա հետևողական աշխատանքներ չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը կանխելու և բացառելու ուղղությամբ, ինչպես նաև տարվա ընցացքում պարբերաբար կազմակերպվել են համաքաղաքային շաբաթօրյակներ:<br>Սանմաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպումն ապահովելու, ինչպես նաև ձմռան ամիսներին ձյան մաքրման աշխատանքների կատարումն պատշաճ կերպով իրականացնելու համար ձեռք է բերվել 9 միավոր բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենա-մեխանիզմ: | Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն<br>Վարչական շրջաններ<br>«Սանիթեք» ընկերություն<br>Հունվար-դեկտեմբեր | |
| 8. | Արտաքին լուսավորություն | Նախատեսվում է իրականացնել 1640 կմ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ: 2018թ. նախատեսվում է նաև իրականացնել արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, որի շնորհիվ կվերականգնվի ևս 30կմ արտաքին լուսավորության ցանց և | Երքաղլույս ՓԲԸ-ն 2018թ-ի ընթացքում իրականացրել է Երևան քաղաքի 2567 օբյեկտների 1660կմ ընդհանուր երկարությամբ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքները մասնավորապես՝<br>ա/ Փողոցների, բակային տարածքների, խաղահրապարակների, արտաքին լուսավորության ապահովում | «Երքաղլույս» ՓԲԸ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տարեվերջին Երևան քաղաքի շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1670կմ: Նախատեսվում է շարունակել նաև բակային տարածքների լուսավորության գործընթացը: | բ/ Թունելների, ստորգետնյա անցումների, ճարտարապետական նշանակություն ունեցող շենքերի, արձանների, այգիների արտաքին լուսավորության ապահովում<br>գ/ տոնական օրերին գեղարվեստական և տոնական լուսավորության ապահովում<br>2018թ-ին ընթացքում իրականացվել է արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ, որի շնորհիվ արտաքին լուսավորության ցանցի երկարությունը ավելացել է 17 կմ-ով: Երևանի քաղաքապետարանի կողմից հիմնանորոգված փողոցների, այգիների և խաղահրապարակների, բակերի արտաքին լուսավորության ցանցերը 2019թ-ի հունվարին ընդունվելու է շահագործման: | | |
| 9. | «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիր | Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ համագործակցությամբ կիրականացվի Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացումը:<br>Իրականացվող աշխատանքների արդյունքում նախատեսվում է՝<br>- նատրիումային լուսատուները փոխարինել որակյալ և ժամանակակից լուսադիոդային լուսատուներով,<br>- անհրաժեշտության դեպքում վերանայել հենասյուների բարձրությունը և տեղադրման հեռավորությունը՝ | Երևան քաղաքի 28 փողոցներում էներգախնայող լուսավորության ցանցի անցկացման նպատակով հատարարված մրցույթի արդյունքներն ամփոփվել և ՎԶԵԲ-ի կողմից հաստատվել են 2018 թվականի դեկտեմբերին: Մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել Օննինեն և Էնստո ընկերությունների համատեղ ձեռնարկությունը, որոնց հետ միասին հանդես են եկել ենթակապալառուներ՝ ԷյԷֆ ինֆրաստրաքչր փլաննինգ, Էյ/Էս ԷյԷֆ լայթինգ ՍՊԸ, Տրանսնախագիծ ՓԲԸ և Քարամյանչին ՍՊԸ-ն:<br>Պայմանագրի արժեքը կազմում է 6,064,940.87 ԱՄՆ դոլար (ներառյալ հարկերը: Աշխատանքները նախատեսված է իրականացնել 14 ամսում: Պայմանագիրը կքնվել է 2019 թվականի հունվարի 11-ին, աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2019թ. փետրվարի 15-ից: Հիմնական նախագծերի պատրաստումից հետո կապալառուն կմեկնարկի աշխատանքների իրականացումը:<br>ՄԱԶԾ հետ համատեղ իրականացվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում իրականացված փողոցների լուսավորության արդիականացման արդյուքում | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» /ԵԿՆ ԾԻԳ/<br>Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | երթևեկելի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովելով առանց ստվերի լուսավորություն,<br>- իրականացնել գոյություն ունեցող մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղիներով,<br>- հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների լուսատեխնիկական տվյալները.<br>վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները:<br>«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում, վերականգնվող նպատակային ֆինանսական ֆոնդում կուտակված խնայողության հաշվին, նախատեսվում է շարունակել արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, մասնավորապես նատրիումական լուսատուները փոխարինել ժամանակակից լուսադիոդային լուսատուներով: | վերականգնվող նպատակային ֆոնդում կուտակված խնայողությունների հաշվին 2018թ. կազմակերպվել է Բաբաջանյան և Շիրակ փողոցների, ինչպես նաև Կիևյան կամուրջի համար լուսադիոդային լուսատուների ձեռքբերման մրցույթ:<br><br>Լուսատուների մատակարարումը և տեղադրումը նախատեսվում է իրականացնել մինչև 2019թ. ապրիլ ամիսը: | | |

## Առևտրի և սպասարկումների ոլորտ

| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, | Նշումներ |
|---|---|---|---|---|---|

| | անվանումը | | | կատարման ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկություններ ի ձևավորում և ներկայացում | Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում: | Աշխատանքներ են տարվել առևտրի և սպասարկման ոլորտի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Առաջարկություններ են ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին», Տեղական տուրքերի և վճարների մասին» «Տեղական ինքնակառավարման մասին» «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: | Առևտրի և սպասարկումների վարչություն Հունվար-դեկտեմբեր | |
| 2. | Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում | Հետիոտնի երթևեկի խոչընդոտը բացառելու նպատակով աշխատանքներ կտարվեն բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգման ուղղությամբ: Հետևողական աշխատանքներ կիրականացվեն սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման բացառման ուղղությամբ: | Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում իրականացվել է համակարգված և արդյունավետ հսկողություն, հետիոտնի երթևեկի խոչընդոտը բացառելու, սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, ինչպես նաև այլ խախտումների ուղղությամբ:<br>Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 43.1-րդ, 113-րդ, 152-րդ, 156-րդ, 158-րդ, 162-րդ և 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումները հայտնաբերելու, արձանագր-ություններ կազմելու ուղղությամբ:<br>2018թ. վարչական շրջաններում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում խախտումների համար կազմված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների ընդհանուր թիվը կազմել է 710, որից վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով՝ 199, 113-րդ հոդվածով՝ 7, 152-րդ հոդվածով՝ 1, 156-րդ հոդվածով՝ 1, 158-րդ հոդվածով՝ 36, 162-րդ հոդվածով՝ 337, 169.16-րդ հոդվածով:<br>Հաշվի առնելով հարցի կարևորությունը շարունակվել են | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հետևողական աշխատանքներ իրականացվել նաև ժամը 24.00-ից հետո գործունեություն ծավալող օբյեկտների նկատմամբ հսկողության ուժեղացման ուղղությամբ: 2018թ. ընթացքում բազմաբնակարան շենքերի առաջին և նկուղային հարկերում գործող հանրային սննդի և զվարճանքի այն օբյեկտներին, որոնց վերաբերյալ ստացվել են բնակիչներից բողոքներ, չեն տրվել թույլտվություններ: | | |
| 3. | Բացօթյա առևտուրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում | Կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ: Երեկոյան ժամերին, հանգստյան և տոնական օրերին բացօթյա ապօրինի առևտուրը արգելելու և կանխարգելելու նպատակով մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակներում կսահմանվի հերթապահություն: | Առևտրի ոլորտի օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով 2018թ. կազմակերպվել են ամենօրյա շրջայցեր, որոնց արդյունքում բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերում: Բացօթյա ապօրինի առևտրից ազատված տարածքներում առևտրի վերսկսումը բացառելու նպատակով շաբաթվա բոլոր օրերին, այդ թվում հանգստյան օրերին, կազմակերպվել են շրջայցեր:<br>Կենտրոնական փողոցներում և հրապարակներում սահմանվել է հերթապահություն: Օրինազանցների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ: Բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու համար առևտրի ոլորտում տարվա ընթացքում կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ 337 արձանագրություններ:<br>Կանոնակարգվել է նաև օրենքով թույլատրվող ապրանքների բացօթյա առևտուրը: Առևտուրը կանոնակարգվել է նաև Երևանի գետնանցումներում: | Հունվար-դեկտեմբեր | |
| 4. | Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական | Կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների | Երևանի քաղաքապետարանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, | 2-րդ և 3-րդ եռամսյակներ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում | կազմակերպման գործընթացը: | ազգաբնակչությանը թարմ ու որակյալ մթերքներով մատչելի գներով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանում, Կասյան փողոցի սկզբնամասում մինչև տարեվերջ հաջողությամբ գործունեություն է ծավալել գյուղատնտեսական մթերքների տոնավաճառը, որտեղ առևտուր են իրականացրել միայն գյուղմթերք արտադրողները: | | |
| 5. | Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում | Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում: | 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ չեն կազմակերպվել: | | |
| 6. | Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում | Անհրաժեշտ հսկողության իրականացում Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի | Ուսումնասիրվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղեր և վիճակախաղեր կազմակերպող օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի վճարումների առկայությունը և դրանց բացակայության դեպքում միջոցներ են ձեռնարկվել թույլտվություններ ձեռք բերելու և համապատասխան տեղական տուրքերը վճարելու | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին, խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ: | ուղղությամբ: Վերոհիշյալ օբյեկտների նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վարչությունում ստեղծված էլեկտրոնային շտեմարանում պարբերաբար կատարվել է տվյալների ճշտում: | | |
| 7. | Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում | Անհրաժեշտ միջոցառումների իրականացում առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ: | Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ: Հսկողություն իրականացված օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք իրականացնելու համար կազմվել է 1 արձանագրություն: | Հունվար-դեկտեմբեր | |
| 8. | Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում | Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում: | Երևան քաղաքի 17 ստորգետնյա անցումներում վարչության կողմից պարբերաբար կազմակերպվել են շրջայցեր և ապօրինի առևտրի արգելման ու կանոնակարգման աշխատանքներ են իրականացվել Աբովյան – Կորյուն փող. խաչմերուկի, Գայի, Տիգրան Մեծի պողոտաների, Գարեգին Նժդեհ հրապարակի, Վարդանանց – Խանջյան փող. խաչմերուկի, Նժդեհի փող. և Արշակունյաց պող. խաչմերուկի ստորգետնյա անցումներում: | Հունվար-դեկտեմբեր | |
| 9. | Առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում և արդիականացում | Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների | 2018 թվականի ընթացքում ապամոնտաժվել են լքյալ և չգործող առևտրի և սպասարկման 5 կրպակներ: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ապամոնտաժման կամ արդիականացման ուղղությամբ: | | | |
| 10. | Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում | Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում: Թափառող կենդանիների վնասազերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմերի մշակում, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդրում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում: Կուսումնասիրվեն նաև թափառող կենդանիների դեմ պայքարի կազմակերպման, ընտանի կենդանիների պահելու կանոնների, շների զբոսանքի կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ տարբեր երկրներում կիրառվող առաջավոր փորձը, և աշխատանքներ կիրականացվեն դրա ներդրման ուղղությամբ: | Հսկողություն է իրականացվել նաև թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ: 2018թ. հուլիսի 3-ի դրությամբ «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից ստերիլիզացվել է՝ 903, քնեցվել՝ 124, վնասազերծվել՝ 5425 թափառող կենդանի:<br>2018թ. հուլիսի 3-ից սկսած «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ն հրաժարվել է Երևան քաղաքում իրականացնել թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ և այդ ուղղությամբ գործունեություն չի ծավալել: Երևանի քաղաքապետարանը միակողմանի լուծել է քաղաքապետարանի և «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը:<br>Աշխատանքներ են տարվել նաև Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N 312-Ն որոշման պահանջներն ապահովելու ուղղությամբ: Ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելու համար կազմվել է՝ 7 արձանագրություն:<br>Առաջարկություններ է ներկայացվել «Կենդանիների մասին», և «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման և ընդունման անհրաժեշտության վերաբերյալ: | 1-3-րդ եռամսյակ | |

## Տրանսպորտ

| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի նոր, | Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի նոր, արդյունավետ երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի | Խորհրդատուի կողմից տրամադրված հասարակական տրանսպորտի նոր ցանցը վերանայվել է և գտնվում է վերջնականացման փուլում: | «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ լիմիթիդ» խորհրդատվական ընկերություն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | արդյունավետ երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի մշակման և ներդրման աշխատանքների իրականացում | մշակման և ներդրման աշխատանքների իրականացում: | | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ | |
| 2. | Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում կառավարման համակարգի փոփոխությունների մեկնարկ | Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում կառավարման համակարգի փոփոխությունների մեկնարկ ապահովելով ցանցին համապատասխան ավտոբուսների և այլ ենթակառուցվածքների համալրումը: | Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ չեն իրականացվել: Աշխատանքը հնարավոր է իրականացնել հասարակական տրանսպորտի նոր ցանցի վերջնական հաստատումից հետո: | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ | |
| 3. | Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում միկրոավտոբուսների շահագործման բացառում | Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում միկրոավտոբուսների շահագործման բացառում: | Միկրոավտոբուսների կրճատման և դրանց շահագործման բացառումը հնարավոր է իրականացնել միայն նոր ավտոբուսների ներկրման և դրանց շահագործումը կազմակերպելուն զուգահեռ: | | |
| 4. | Մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում | Մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձ-րացմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև մետրոպոլիտենի դրենաժային թունելի կառուցում և ընդլայնում («Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների հատվածում մոտ 1կմ երկարությամբ), | Մրցույթում հաղթած իսպանական «Ազասու» ընկերության կողմից գործող դրենաժային թունելի երկարացման համար կատարվող աշխատանքները շարունակվել են: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հորատված է 452.4 գ.մ, որից 107.3 գ.մ. 2018թ-ին: Հորատանցման հետ զուգահեռ կատարվել են տորկրետավորման և ներարկման, ինչպես նաև թունելի ճնավղանի (лоток) կառուցման (450 գ.մ) աշխատանքներ: | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ<br>«Ազասու» ընկերություն<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գործող թունելի վիճակի բարելավում (ներառյալ հակակոռոզիոն ծրագիր), վագոնների հիմնանորոգում և արդիականացում, շարժասանդուղքների հիմնանորոգում: | | | |
| 5. | Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում | Վերգետնյա էլեկտրատրանսպորտի հետագա զարգացմանը, շահագործման անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ նոր տրոլեյբուսների ներկրում, ընդհանուր տնտեսության, հպակային ցանցի, մալուխային տնտեսության բարելավում, առկա շարժակազմի հիմնանորոգում: | -Սայաթ-Նովայի, Արցախի պողոտաներում, Չարենցի, Սեբաստիայի, Էրեբունի, Բաբաջանյան, Արտաշիսյան, Բագրատունյաց, Աճառյան փողոցներում նորոգվել է 4300 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նախկինում օգտագործված պղնձալարերով.<br>-Մարշալ Բաղրամյան պողոտայում և Սեբաստիայի փողոցում վերականգնվել և գործարկվել է 185 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանցի սնման մալուխագիծ.<br>- Տեղադրվել է 216 հատ մալուխի կցորդիչ.<br>-Նորով է փոխարինվել հպակային ցանցի սնման թվով 10 արկղ.<br>-Կոմիտասի և Ծովակալ Իսակովի պողոտաներում նորով է փոխարինվել մեկական հենասյուն.<br>- Նորոգվել է 2 հատ տրոլեյբուսի նստատեղերի լրակազմ.<br>-Նորով է փոխարինվել թիվ 11 ք/ենթակայանի 30 մետր երկարությամբ մալուխագիծը.<br>-Մաշտոցի, Իսակովի, Տիգրան Մեծի, Արշակունյաց պողոտաներում, Ազաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչ, Արգիշտի, Խանջյան,Սաֆարյան, Բաբաջանյան, Նալբանդյան, Աճառյան և Էրեբունի փողոցներում ներկվել է թվով 1300 հենասյուն.<br>-Բաբաջանյան փողոցում նորով է փոխարինվել 400 մետր հպակային ցանցի ճոպան.<br>-Արշակունյաց-Բագրատունյաց պողոտաների խաչմերուկում կառուցվել է տրոլեյբուսի հպակային ցանցի նոր օղակ՝ նախկինում օգտագործված պղնձալարերով.<br>-ավարտվել է վթարված թիվ 029 տրոլեյբուսի թափքի | «Երևան էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հիմնանորոգման աշխատանքները:<br>-Մասնակի ներկվել է թվով 34 տրոլեյբուսի թափքի.<br>-Աշխատանքի հրապարակում կառուցվել է 100 մետր երկարությամբ հպակային ցանց.<br>-Ապամոնտաժվել է ՀԱ թաղամասում գտնվող հ.27 քարշի ենթակայանը:<br>-Սեբաստիայի փողոցում նորոգվել է 1960 մետր երկարությամբ հպակային ցանց՝ նոր պղնձալարերով.<br>-Կատարվել է թվով 8 տրոլեյբուսների թափքերի մասնակի նորոգում<br>-Վերանորոգվել են տրոլեյբուսի թվով 3 քաշող շարժիչ և թվով 5 օդամղիչ.<br>-Հիմնանորոգվել են Բագրատունյաց 44 և Թևոսյան 12 հասցեներում գտնվող տարածքների լուսավորության համակարգերը.<br>-Մասնակիորեն վերանորոգվել են Բագրատունյաց 44 հասցեում գտնվող վարչական մասնաշենքի, մեքենայական բաժանմունքի և արհեստանոցի տանիքները: | | |
| 6. | Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխվածության վերանայման և կահավորման աշխատանքների իրականացում | Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխվածության վերանայման և կահավորման աշխատանքների իրականացում: | Կատարվել է հասարակական տրանսպորտի կանգառների նախնական տեղաբաշխում՝ էլեկտրոնային եղանակով: Սակայն վերջնական հաստատումը պետք է կատարվի Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի մշակման և ներդրման աշխատանքների ընդհանուր համատեքստում: | | |
| 7. | Ավտոկայանատեղերի կազմակերպում | Վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու շահագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:<br>Ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման աշխատանքների իրականացում: | Երևան քաղաքի տարածքում գործող վճարովի ավտոկայանատեղերում իրականացվել են ճանապարհային նշանների վերականգնման, գծանշումների թարմացման աշխատանքներ:<br>- Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.125-Ա որոշմամբ թույլատրվել է քաղաքացի Սարգիս Կարապետյանին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Տերյան-69 | Տրանսպորտի վարչություն<br>«Փարկինգ Սիթի Սերվիս» և «Լոկատոր» ՓԲԸ-ներ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հացեին հարակից ճանապարհահատվածում:<br>- Երևան քաղաքի ավագանու 13.02.2018թ. հ.126-Ա որոշմամբ թույլատրվել է «Բուզանդ-17» համատիրությանը կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Ա.Քոչինյան փողոցի՝ «Բուզանդ-17» հասցեին հարակից ճանապարհահատվածում:<br>-Երևան քաղաքի ավագանու 13.11.2018թ. հ.22-Ա որոշմամբ թույլատրվել է «Եվրոպա հյուրանոց» ՓԲԸ-ին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Հանրապետության փողոցի՝ հ.38 հասցեի շենքին հարակից ճանապարհահատվածում: | | |
| 8. | Թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանատեղերի սահմանման և կազմակերպման աշխատանքների իրականացում | Թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանատեղերի սահմանման և կազմակերպման աշխատանքների իրականացում: | - Երևանի քաղաքապետի 12.03.2018թ. հ.862-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ՝ Բուզանդի փողոցը Արամի փողոցին միացնող ճանապարհահատվածում (Վերնիսաժին հարակից տարածք)<br>- Երևանի քաղաքապետի 13.04.2018թ. հ.1396-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղեր՝ Մարշալ Բաղրամյան պողոտա հ.2 հասցեին հարակից ճանապարհահատվածում և Խանջյան փողոցի՝ Վերնիսաժի հանդիպակաց հատվածում:) | Տրանսպորտի վարչություն<br>ՀՀ Ճանապարհային ոստիկանություն<br>Հունվար-դեկտեմբեր | |
| 9. | Ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում | Ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում: | ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ իրականացված համատեղ ուսումնասիրությունների արդյունքում՝<br>-Պուշկինի փողոցում կազմակերպվել է տրանսպորտային միջոցների միակողմանի երթևեկություն:<br>-Մաշտոցի պող.-Պարոնյան-Գր.Լուսավորչի փողոցների խաչմերուկում նոր սխեմայի ներդրմամբ կազմակերպվել է տրանսպորտային միջոցների ժամանակավոր երթևեկություն:<br>-Գասպարյան-Երևանյան փողոցների խաչմերուկում տեղադրվել է ադապտիվ կառավարմամբ լուսացուցային օբյեկտ:<br>- ապրիլի 24-ի օրվա հետ կապված իրականացվել են ճանապարհային գծանշման աշխատանքներ Ծիծեռնակաբերդին հարակից տարածքներում և | Տրանսպորտի վարչություն<br>ՀՀ Ճանապարհային ոստիկանություն<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փողոցներում.<br>-Սայաթ Նովայի պողոտայի՝ Տերյան փողոցից մինչև Մարկ Գրիգորյան փողոցն ընկած հատվածում վերացվել է տրանսպորտային միջոցների կանգառի և կայանման արգելքը:<br>-հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով մայրաքաղաքի թվով 10 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ.<br>-Դավիթ Անհաղթի փողոցում տրանսպորտային միջոցների ձախ շրջադարձի համար առանձնացվել է երթևեկելի գոտի.<br>-Աճառյան փողոցի բոլոր խաչմերուկներում կազմակերպվել է լուսացուցային ադապտիվ կառավարում:<br>-լուսացուցային նոր օբյեկտ է գործարկվել Լենինգրադյան-Շինարարների փողոցների խաչմերուկում.<br>-Աղայան փողոցի և Բուզանդի փողոցի որոշ հատվածներում կազմակերպվել է միակողմ երթևեկություն.<br>-Քոչինյան-Ամիրյան-Բուզանդի-Կողբացու փողոցների երթևեկության կազմակերպման սխեմայում կատարվել է փոփոխություն.<br>-թվով 6 խաչմերուկներում կատարվել է համապատասխան խաչաձև (վանդակավոր) գծանշում՝ խցանումները բացառելու նպատակով.<br>-մայրաքաղաքի մի շարք փողոցներում հեծանվային երթևեկությունը կարգավորելու նպատակով տեղադրվել են «Կիսիր ճանապարհը» նշանները: | | |
| 10. | Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված աշխատանքների | Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում: | -Ներքաղաքային երթուղիներում պարբերաբար իրականացվել են ստուգայցեր՝ անբավարար արտաքին տեսք և ուղեսրահ ունեցող տրանսպորտային միջոցների աշխատանքը արգելելու, վարորդների կողմից աշխատանքի ժամանակ ծխելու, երաժշտություն միացնելու դեպքերը բացառելու համար:<br>- Ավտոբուսային h.16 երթուղու աշխատանքի դադարեցումից | Տրանսպորտի վարչություն<br>«Երևանտրանս» ՓԲԸ<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | իրականացում | | հետո, Նուբարաշեն թաղամասի տրանսպորտային սպասարկումն ապահովելու նպատակով, Երևանի քաղաքապետի 19.01.2018թ. հ.138-Ա որոշմամբ ավտոբուսային հ.18 երթուղին ե/գ կայարանից երկարացվել է մինչև Նուբարաշեն՝ ավելացնելով շարժակազմի թվաքանակը:<br>-Դավթաշեն թաղամասի բնակչության սպասարկման բարելավման նպատակով ավտոբուսային հ.12 երթուղու ուղեգծում կատարվել է մասնակի փոփոխություն, այն Եղվարդի խճուղուց շահագործվում է Փիրումյան, Տ.Պետրոսյան փողոցներով:<br>-Դավթաշեն գյուղի բնակիչների սպասարկումն ապահովելու նպատակով, ժամանակավորապես, մեկ ավտոբուսով, կազմակերպվել է անվճար ուղևորափոխադրումներ Իոսիֆյան փողոցից մինչև Տ.Պետրոսյան-Սասնա Ծռերի խաչմերուկ:<br>-միկրոավտոբուսային հ.11 երթուղու դադարեցումից հետո Մուշավան, Վարդաշեն, Նոր Արեշ թաղամասերի բնակիչների տրանսպորտային սպասարկումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետի 22.06.2018թ. հ.2336-Ա որոշմամբ ավտոբուսային հ.18 երթուղու ուղեգիծը ե/գ կայարանից երկարացվել է և այն կսպասարկի Նոր Արեշ և Մուշավան թաղամասերը, իսկ ավտոբուսային հ.10 երթուղին երկարացվել է մինչև Նուբարաշեն թաղամաս:<br>-միկրոավտոբուսային հ.62 երթուղու աշխատանքի դադարեցումից հետո Քանաքեռի 14-րդ փողոցի բնակիչների տրանսպորտային սպասարկումն ապահովելու նպատակով միկրոավտոբուսային հ.45 երթուղու ուղեգիծը փորձնական կարգով երկարացվել է մինչև նշված փողոց (միկրոավտոբուսային հ.62 երթուղու վերջնակետ):<br>-միկրոավտոբուսային հ.7 երթուղու աշխատանքի դադարեցումից հետո, Նոր Նորքի զանգվածներից դեպի Էրեբունի (Դավիթ Բեկի փողոցով) տրանսպորտային կապը բարելավելու նպատակով 2 միավորով ավելացվել է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | շարժակազմի քանակը ավտոբուսային h.4 երթուղում: -ավտոբուսային h.56 երթուղու աշխատանքի դադարեցումից հետո. Հաղթանակ թաղամասի բնակիչների տրանսպորտային սպասարկումը բարելավելու նպատակով միկրոավտոբուսային h.23 երթուղու ուղեգիծը երկարաձգվել է մինչև Կաթի կոմբինատ (ավտոբուսային h.56 երթուղու վերջնակետ): | | |
| **Բնապահպանություն** | | | | | |
| Հ/h | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Ծառերի ձևավորում | Կշարունակվեն գարնանային և աշնանային ժամանակահատվածում ծառերի ձևավորման աշխատանքները: Կձևավորվի շուրջ 27.000 ծառ: Տարվա կտրվածքով կիրականացվի սանիտարական ձևավորման, խորը և կանաչ էտի աշխատանքներ: | Հ. ԵՔ-ԲՄԾՁԲ 18/35<br>Շուրջ 27.000 ծառեր (բարդի, սոսի, ակացիա, հացենի, կաղնի, թեղի և այլն) ենթարկվել են սանիտարական, ձևավորման, կանաչ էտման: Խորը էտման են ենթարկվել թվով 467 վթարային ծառեր և հատվել՝ շուրջ 475 չոր ծառ:<br>Աշխատանքները կատարվել են բոլոր վարչական շրջաններում: | «Զորաշեն» ՍՊԸ<br>15.04.2018թ-25.12.2018թ. | |
| 2. | Ծառերի կրապատում | Կկրապատվի 75.000 ծառ: | Հ. ԵՔ-ԳՀԱՊՁԲ 18/15<br>Կատարվել է շուրջ 75.000 ծառերի կրապատման աշխատանքներ:<br>Աշխատանքները կատարվել են բոլոր վարչական շրջաններում: | «Զորաշեն» ՍՊԸ<br>12 վարչական շրջանների կանաչապատման ընկերություններ<br>01.04.2018թ. -15.10.2018թ | |
| 3, | Ծառերի և թփերի տնկում | Կտնկվի շուրջ 46.000 հատ ծառ և թուփ: Մասնավորապես կտնկվեն սոսիներ, թխկիներ, ակացիաներ, թույաներ և այլն: | ԵՔ-ԲՄԱՊՁԲ- 18/18<br>Հ. ԵՔ-ԲՄԱՊՁԲ 18/9<br>Տնկվել են՝ սոսի, հացենի, կաղնի, կատալպա, թխկի, ակացիա, տեսակի ծառեր և թփեր՝ շուրջ 26.000 հատ ծառ և թուփ:<br>Աշխատանքները կատարվել են բոլոր վարչական շրջաններում: | 12 վարչական շրջանների կանաչապատման ընկերություններ<br>«Նարեկ Մաիլյան» Ա/Ձ<br>Մինչև 01.10.2018<br>«Նոր Բարեկարգում» ՓԲԸ<br>13.02.18թ-10.04.18թ | Նախատեսվածից պակաս կատարված տնկումները կապված է Փյունիկ բարեգործական հիմնադրամի գործունեության դադարեցման հետ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | Միջազգային փորձի ուսումնասիրություն | Աշխատանքներ կկատարվեն միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացմանը միտված ծրագրի իրագործելիության ուսումնասիրման աշխատանքների համար նախադրյալների ստեղծման նպատակով: | Պարբերաբար կատարվել են միջազգային փորձի ուսումնասիրում: Ուսումնասիրությունների արդյունքները կիրառվում են տարածքերի ձևավորման, դենդրոնախագծերի կազմման շրջանակներում: Օգտագործվել են հատկապես ԱՊՀ երկրների խոշոր քաղաքների փորձը կանաչ տարածքների դենդրոնախագծերի կազմման ինչպես նաև մշակութային զարգացման խնդիրներ: | Հունվար-դեկտեմբեր | |
| 5. | Ծառերի բուժում | Բուժման կենթարկվի շուրջ 30.000 ծառ: | Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում կատարվել են ծառերի բուժման աշխատանքներ: 12 վարչական շրջանների կանաչապատման ընկերություններին տրամադրվել է 373 լիտր դեղանյութ, որի դիմաց բուժման են ենթարկվել շուրջ 110.000 ծառ: Մեծ ծավալի վարաքի զարգացման պատճառով բուժման աշխատանքները եռակի անգամ ավելացվել են:<br>Ծառերը բուժվել են վնասատուներից և միջատներից: | 12 վարչական շրջանների կանաչապատման ընկերություններ 01.05.2018-01.09.2018 | |
| 6. | Ծաղկասածիլների տնկում | Կտնկվի 2.730.000 ծաղկասածիլ, այդ թվում վարդակակաչ: | Իրականացվել են ծաղկապատման լայնածավալ աշխատանքներ: Տնկվել է 1.200.000 ծաղկասածիլ: Տնկվել են հիմնականում տագետես, ցինյա, մեխակ, փիփերթ, պետունյա տեսակի ծաղկասածիլներ:Իրականացվել են ծաղկանոցների խնամքի աշխատանքներ՝ փոր, փխրեցում, քաղհան, պարարտացում, բուժում, լրացումներ և ինտենսիվ ոռոգում:<br>Աշխատանքները կատարվել են բոլոր վարչական շրջանների ծաղկանոցներում: | Փյունիկ» բարեգործական հիմնադրամ և 12 վարչական շրջանների կանաչապատման ընկերություններ 01.04.2018թ-01.07.2018 | Նախատեսված ից պակաս կատարված տնկումները կապված է Փյունիկ բարեգործակա ն հիմնադրամի գործունեությա ն դադարեցման հետ Ձեռք չեն բերվել վարդակակաչ-ներ: |
| 7. | Գեղարվեստական կոմպոզիցիաների տեղադրում | Նախատեսվում է տեղադրել թվով 60 գեղարվեստական կոմպոզիցիա՝ թափվող ծաղիկներով, որոնք կտեղադրվեն մայրաքաղաքի գլխավոր | ԵՔ-ԲՄԱՊՁԲ 18/11<br>Մայրաքաղաքի սիզամարգերը համալրվել են նորաոճ ծաղկային կոմպոզիցիաներով, որոնք տեղադրվել են Հանրապետության, Ֆրանսիայի հրապարակներում, Մ. | «Ֆիոնա-Ֆլորա» ՍՊԸ 01.05.2018-01.07.2018 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և պուրակներում: | Մանուշյանի անվան, Խաչքարերի պուրակներում: Մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում տեղադրվել և պատշաճ տեսքի են բերվել նախորդ տարիներից պահեստավորված գեղարվեստական կոմպոզիցիաները: | | |
| 8. | Բուսահողի ներկրում | Կներկրվի 10526 խմ բուսահող, ինչը հնարավորություն կստեղծի բարելավել սիզամարգերի հողային կառուցվածքը: | Հ.ԵՔ-ԲՀԱՊՁԲ-18/10<br>Ներկրվել է 10526 խմբուսահող՝ սիզամարգերի բարելավման նպատակով:<br>Ներկրվող բուսահողի քանակությունը հնարավորություն է ընձեռել բարելավել շուրջ 10-12 հեկտար սիզամարգեր:<br>Աշխատանքները կատարվել են բոլոր վարչական շրջանների հողի բերի շերտի աղքատ սիզամարգերում | «Ազաթ-777» ՍՊԸ<br>01.04.2017-01.10.2017<br><br>12 վարչական շրջանները<br>Մինչև 15.10.2018թ. | |
| 9. | Կանաչապատ տարածքների պատշաճ սպասարկում | Ամենօրյա աշխատանքներ կիրականացվեն կանաչապատ տարածքների պատշաճ սպասարկումն իրականացնելու ուղղությամբ, այդ թվում՝ վերակառուցվող թվով 5 հանգստի գոտիներում: | Կանաչապատ տարածքներում իրականացվել են ագրոկանոններին համապատասխան աշխատանքներ՝ պատճաշ սպասարկումն ապահովելու համար:<br>Կատարվել է սիզամարգերի խոտհունձ, սիզամարգերի խոտացանություն, ծառերի էտ, ծառերի բնաբաժակների փոխարինում, ոռոգման աշխատանքներ, ծաղկասածիլների տնկում, ծառերի էտ, ծաղկասածիլների տնկում, ծառերի բջջաշիվերի հեռացում, կրապատում, ծառատունկ, ծառերի բուժում և այլն: | Վարչական շրջաններ<br>15.01-31.03 | |
| 10. | Ոռոգման ցանցի ստեղծում | Նախատեսվում է ստեղծել նոր ոռոգման ցանց Մոսկովյան փողոցում (Կենտրոն վարչական շրջան) և Շիրակի փողոցում: Հրազդանի կիրճում կկառուցվի պոմպակայան և կմիացվի Արաբկիր զբոսայգու գործող ոռոգման համակարգին: | ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/20-1<br>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/20-2<br>Կատարվել են հետևյալ աշխատանքները.<br>1.Մոսկովյան և Նալբանդյան՝ Մոսկովյան-Իսահակյան փողոցների միջանկյալ հատվածում ոռոգման ցանցի կառուցում: (շուրջ 2000 գծմ)<br>2.Շիրակի փողոցի ոռոգման ցանցի կառուցում՝ շուրջ 630 գծմ:<br>3.Մանանդյան փողոցի՝ Գ.Նժդեհի փողոցնից մինչև «Հայէլեկտրոն գործարան» հատվածում ոռոգման ցանցի կառուցում՝ շուրջ 1220 գծմ: | Աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն<br>1. «Արթ-Կարշին» ՍՊԸ<br>12.04-12.05.18թ.<br>2. «Դավիթշին» ՍՊԸ<br>12.04-12.05.18թ. | Հրազդանի Կիրճ-Արաբկիր զբոսայգու ոռոգման համակարգի չկառուցման պատճառը Արթ Կարշին ՍՊԸ-ի հետ պայմանագրի լուծումն է |
| 11. | Համագործակցություն հասարակական կազմակերպությունն | Աշխատանքներ կիրականացվեն նաև հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ | Իրականացվել է համագործակցություն հասարակական և ոլորտի այլ կազմակերպությունների հետ, պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ շահագրգիռ | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | երի և մասնավոր հատվածի հետ | «Ծառատունկ» հայ-ամերիկյան ծրագրի հետ: | կողմերի հետ:Մասնավորապես՝ Հայաստանի ագրարային համալսարանի, Երևանի բուսաբանական այգու, հասարակական կազմակերպությունների և այլնի հետ: | | |
| **Հանրակրթություն** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Դպրոցներում ինժեներական խմբակ-լաբորատորիաների ստեղծման մեկնարկային ծրագրի իրականացում | Ապահովել համագործակցություն՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկատիրական միություն» ՀԿ-ի հետ՝ դպրոցներում ինժեներական խմբակ-լաբորատորիաների ստեղծման մեկնարկային ծրագրի /ռոբոտաշինություն/ իրականացման նպատակով: | Դպրոցներում ինժեներական խմբակ-լաբորատորիաների ստեղծման մեկնարկային ծրագրի իրականացման նպատակով՝ դպրոցների տնօրենների մասնակցությամբ «Կրթական համակարգում նախնական ինժեներական կրթության ներդրում» ծրագրի շրջանակում կազմակերպվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման հնարավորություններին ծանոթանալու միջոցառում: Արդյունքում՝ Երևանի հ.200 դպրոցը երրորդ եռամյակում համալրեց ռոբոտաշինություն իրականացնող դպրոցների շարքը: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ,«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկատիրական միություն» ՀԿ:<br>2-4-րդ եռամսյակ | |
| 2. | Սովորողների և մանկավարժների համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում | Շարունակել սովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված գործընթացները՝ դասապրոցեսում նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումն ապահովելու համար: | Կրթության ազգային ինստիտուտի և Դպրոց- կենտրոնների համագործակցությամբ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ուսուցիչների համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացներ՝ ուսումնասիրվող առարկաները համակարգչի կիրառությամբ դասավանդելու նպատակով: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ<br>2- րդ - 4-րդ եռամսյակ | |
| 3. | Դպրոցականի ազգային նկարագրի ձևավորման, Երևանի նկատմամբ սիրո և պատասխանատվու թյան խորացման նպատակով՝ դպրոցներում | Դպրոցականի ազգային նկարագրի ձևավորման, Երևանի նկատմամբ սիրո և պատասխանատվության խորացման նպատակով՝ դպրոցներում խմբակի ձևով կամ դասղեկական ժամերին ուսումնասիրել «Երևանագիտություն» ծրագիրը՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի, «Էրեբունի | Երևանի 2800 - ամյակի կապակցությամբ քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներին առաջարկված «Երևանագիտություն» ծրագրի շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է միջդպրոցական մրցույթ: Մասնակից 60 թիմերից ամենաբարձր միավորներ վաստակած դպրոցների միջև մրցույթը անցկացվել է հոկտեմբեր ամսին:<br>1-ին, 2-րդ, 3-րդ մրցանակների են արժանացել | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | խմբակի ձևով կամ դասղեկական ժամերին ուսումնասիրել «Երևանագիտություն» ծրագիրը՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի, «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի» համագործակցությամբ | պատմահնագիտական արգելոց-թանգարանի» համագործակցությամբ: | համապատասխանաբար h.h. 66,67,59 դպրոցների թիմերը և պարգևատրվել համակարգիչներով: Երևանի h.h. 126 128 դպրոցների թիմերը արժանացել են խրախուսական պարգևի՝ ստանալով «Երևան» պատկերագրքեր: | | |
| 4. | Երևանյան դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպել փորձի փոխանակում, վարպետաց դասեր՝ տարվա լավագույն տնօրենների, ուսուցիչների, վաստակավոր մանկավարժների, Խորենացու մեդալակիրների, տարակարգ ունեցող ուսուցիչների ուժերով՝ համաձայն ժամանակացույցի | Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը՝ Երևանյան դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպել փորձի փոխանակում, վարպետաց դասերի կազմակերպում՝ տարվա լավագույն տնօրենների, ուսուցիչների, վաստակավոր մանկավարժների, Խորենացու մեդալակիրների, տարակարգ ունեցող ուսուցիչների ուժերով՝ համաձայն ժամանակացույցի: | Համաձայն ժամանակացույցի՝ Երևանի Հ. Կարապենցի անվ. h.6, Ալ. Պուշկինի անվ.h.8, Ն. Աղբալյանի անվ.h.19, Հ. Հայրապետյանի անվ. 78, Խ. Աբովյանի անվ. h.84, Պ.Ցավրովի անվ. h.131,Մ.Մեծարենցի անվ.h. 146 դպրոցների «Լավագույն ուսուցիչ» և Երևանի h.h 15,33,54.60,90,109,121,126 մանկապարտեզների «Լավագույն դաստիարակ» կոչման հավակնորդ դաստիարակները, ինչպես նաև վաստակավոր, մեդալակիր, փորձառու մանկավարժները վարել են վարպետաց դասեր: Հրավիրվել են կրթական այլ հաստատություններից մասնագետներ՝ ծանոթանալու գործընկերոջ փորձին: Դասալսումից հետո կազմակերպվել է մտքերի փոխանակում: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Ուսուցիչների և դաստիարակների փորձի փոխանակում | Փորձի փոխանակման նպատակով շարունակել ուսուցիչների և դաստիարակների փոխայցելությունները Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ: Կազմակերպել աշակերտների փոխայցելություններ: | Երևան - Սանկտ Պետերբուրգ համագործակցության ծրագրի շրջանակում Երևան քաղաքի 4 դպրոցների բարձր առաջադիմություն ունեցող 8 աշակերտ հունիսի 22-26-ը Սանկտ Պետերբուրգում մասնակցել են «Алые паруса» միջոցառմանը:<br><br>«Սանկտպետերբուրգյան օրերը Երևանում» ծրագրի շրջանակում Երևանի հ.55 դպրոցում անցկացվել են Սանկտ Պետերբուրգի հ.հ.619 և 235 դպրոցների տնօրենների «Վարպետաց դասերը»՝ Երևանի գործընկերներին ղեկավարման իրենց փորձը և «Ներառական կրթության սանկտպետերբուրգյան փորձը» ներկայացնելու նպատակով: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ<br>2-րդ-3-րդ եռամսյակ | |
| 6. | Համընդհանուր ներառական կրթություն | Ձեռնարկել միջոցներ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման՝ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն Երևանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման ուղղությամբ՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության, ֆինանսների նախարարությունների և համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ: | Երևան քաղաքում համընդհանուր ներառականության համակարգի ներդրմանը աջակցելու նպատակով «Հույսի կամուրջ» և «Առաքելություն Արևելք» Հ/Կ-ների համագործակցությամբ կազմակերպվել են թվով 65 դպրոցների տնօրենների վերապատրաստումներ՝ «Ապրենք միասին, սովորենք միասին» ծրագրի շրջանակում և նույն դպրոցների ուսմասվարների վերապատրաստումներ՝ հանրակրթության վարչության և համապատասխան Հ/Կ համագործակցությամբ:<br>Նախապատրաստվել և իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումների ծրագրեր՝ «Վորլդ Վիժն - Հայաստան» և «Սեյվ դը չիլդրեն» ՀԿ-ների համագործակցությամբ:<br>Ներառական կրթության ոլորտում առկա միջազգային փորձին, ԱՄՆ–ի կրթական հաստատություններում ներառականության գործընթացին ծանոթանալու նպատակով՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈւՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ ԵՊՄ և ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանների դասախոսների կողմից Երևանում կազմակերպվել է միջազգային գիտաժողով, ինչպես նաև վարպետաց դաս՝ | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխան մասնագետների համար: | | |
| 7. | Համամագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցների/մանկապարտեզների և ծնողների միջև | Համամագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցների/մանկապարտեզների և ծնողների միջև՝ երեխայի կարիքով պայմանավորված աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով: | Երևանի քաղաքապետարանի 54 դպրոցներում և 8 մանկապարտեզներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2177 աշակերտի և մանկապարտեզների 208 սաների ծնողների հետ կազմակերպվել են<br>ա/« Կլոր սեղաններ՝ «Աուտիզմ ունեցող երեխաները և նրանց խնդիրները», «Երեխաները և իրենց իրավունքները», «Մասնագիտական կողմնորոշում և ծանոթացում վերականգնողական կենտրոնների հետ» թեմաներով:<br>բ /Ֆորում՝ «Ներառական կրթության նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն»:<br>գ/ Սեմինար՝ «Սահուն անցում մանկապարտեզից դպրոց»՝ աջակից ունենալով համապատասխան Հ/Կ- ներին: | Հունվար-դեկտեմբեր | |
| 8. | Դպրոցների բազմամասնագիտական խմբերի վերապատրաստումներ | Դպրոցների բազմամասնագիտական խմբերի վերապատրաստումներ՝ համապատասխան ՀԿ-ների աջակցությամբ: | Համակարգվել է դպրոցների բազմամասնագիտական թիմերի մասնագետների՝ «Ապագան քոնն է», «Վորլդ Վիժն -Հայաստան» ՀԿ-ների համագործակցությամբ և «Քայլ առ քայլ» ծրագրի շրջանակում իրականացվող վերապատրաստման գործընթացը:<br>Հանրակրթության վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է դպրոցների հոգեբանների համար սեմինար պարապմունքներ՝ Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի դասախոսների մասնակցությամբ: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ, ՀԿ-ներ 1-ին, 2-րդ և 4-րդ եռամսյակ | |
| 9. | Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպում | UCOM ընկերության համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով: | Կազմակերպվել են Երևանի հ.հ.125, 131,162 և համապատասխանաբար՝ Սուխումի Հ. Թումանյանի հ.9, Ֆրանսիայի Վալանս քաղաքի Սուրբ Սահակ հայկական առաքելական եկեղեցուն կից գործող Դավիթյան» մեկօրյա և Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի «Սուրբ Մեսրոպ-Արապեան» ամենօրյա դպրոցների աշակերտների առցանց շփումներ՝ հայրենագիտական թեմաների շուրջ:<br>Հեռուստակամուրջ է կազմակերպվել Երևանի Ստ.Զորյանի անվ. հ.56 և Փարիզի «Դպրոցասեր» վարժարնի միջև՝ «Գարունը հայերեն է գալիս» խորագրով: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ 2-րդ -3-րդ եռամսյակ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10. | «Օգնի՛ր դպրոցիդ» կայք էջերի ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացում | «Օգնի՛ր դպրոցիդ» կայք էջերի ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացում: | Համակարգվել են դպրոցների և մանկապարտեզների նկատմամբ ծնողական համայնքի ցուցաբերած բարոյական աջակցության դրսևորումները, ինչպես նաև դպրոցականների քաղաքացիական դաստիարակությանը նպաստող միջոցառումները: | Հունվար-դեկտեմբեր | |
| 11. | Բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի և մանկապարտեզի ծրագիր | Շարունակել բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի և մանկապարտեզի ծրագրի իրականացումը: | Քաղաքապետարանի ենթակայության դպրոցները և մանկապարտեզները աշխատակազմի հանրակրթության, բնապահպանության վարչությունների, վարչական շրջանների համապատասխան բաժինների համագործակցությամբ իրականացնում են «Դպրոց, մանկապարտեզ բարեկարգ շրջակայքով, կանաչապատ և ծառաշատ բակով» ծրագիր: /Հ.h.31, 32, 35, 61, 68, 77,80, 84, 87,90,,93, 95,99,101,120,137, 162,175,196, Հր.Մաթևոսյան դպրոցներ, Հh,1,23,26,25,31,32,33,44,47,62,66,78,80,81,89,90,91,114,126,146,141,154,մանկապարտեզներ/ | Հունվար-դեկտեմբեր | |
| 12. | ՀՀ դպրոցականների առարկայական և շախմատի օլիմպիադաների երևանյան փուլերի կազմակերպում: | | ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի տարածքային և քաղաքային փուլերը կազմակերպվել են՝ համաձայն Երևանի քաղաքապետի՝ 31.01.2018թ. h. 81-Ա կարգադրության:<br>Վերոնշյալ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբերը սահմանված ժամկետներում կազմակերպել և անցկացրել են օլիմպիադայի երկու փուլերը:<br>Քաղաքային փուլին մասնակցելու իրավունք են ստացել 2245 դպրոցական, որից հանրապետական փուլ են անցել 468 աշակերտ, դիպլոմների են արժանացել՝<br>1-ին կարգ՝ 44 աշակերտ,<br>2-րդ կարգ՝ 126 աշակերտ,<br>3-րդ կարգ՝ 144աշակերտ:<br>Ընդհանուր թիվը՝ 314: Առաջին կարգի դիպլոմակիրները քաղաքապետարանի կողմից պարգևատրվել են:<br>Կազմակերպվել և անցկացվել է Երևան քաղաքի | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Դպրոցներ<br>1-ին -2-րդ եռամսյակ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դպրոցականների շախմատի 13-րդ օլիմպիադայի քաղաքային փուլը: Կատարվել է հաղթող թիմերի պարգևատրում: | | |
| 13. | ՀՀ անկախության 27-ամյա հոբելյանին նվիրված մարզական խաղերի, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի կազմակերպում: | | Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի՝ 17.02.2018թ. հ.24-Ա/2 հրամանի՝ կազմակերպվել և անցկացվել են ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 27-րդ մարզական խաղերը, ինչպես նաև ԱԺ գավաթի խաղարկությունը:<br>27-րդ մարզական խաղերում մրցանակային 1-ին տեղ գրավել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը, 2-րդ տեղ՝ Շենգավիթը, 3-րդ տեղ՝ Արաբկիրը:<br>16 մարզաձևերից առաջին տեղ գրաված թիմերը, ինչպես նաև մրցանակակիր վարչական շրջանները և ԱԺ գավաթի խաղարկության 1-6-րդ դասարանների 1-ին տեղ գրաված թիմերը պարգևատրվել են Երևանի քաղաքապետարանի կողմից: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն,<br>Դպրոցներ<br>2-րդ-4-րդ եռամսյակ | |
| 14. | «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն ուսուցիչ, տարվա լավագույն դաստիարակ», ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության նույնանուն մրցույթների քաղաքային փուլերի անցակցում | Մանկավարժների խրախուսման նպատակով շարունակել «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն ուսուցիչ, տարվա լավագույն դաստիարակ», ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության նույնանուն մրցույթների քաղաքային փուլերի անցակցումը, սովորողների մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի /քաղաքային, հանրապետական փուլեր/, առարկայական օլիմպիադաների կազմակերպումը և անցկացումը: | Երևանի քաղաքապետի՝ 23.05.2018թ. հ.434-Ա կարգադրությամբ հաստատվել է Երևան քաղաքի «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների քաղաքային փուլը գնահատող հանձնաժողովների կազմերը: Անցկացվել է վերոնշյալ մրցույթների քաղաքային փուլը՝ համաձայն ՀՀԿԳ նախարարի համապատասխան հրամանով հաստատված կարգի:<br>Մրցույթը կազմակերպվել է նշված կարգի համաձայն:<br>Ընտրվել են Երևան քաղաքի՝ տարվա լավագույնները:<br>Մրցույթի հանրապետական փուլին երաշխավորված մանկավարժները ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել են խրախուսանքի: Հաղթած մանկավարժների պարգևատրումը կազմակերպվել է Ուսուցչի մասնագիտական օրվան նվիրված միջոցառման ժամանակ: | 2-րդ-4րդ եռամսյակներ | |
| 15. | Իրականացվող մարզական և այլ | Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում կրթության | «Երևանագիտություն» ծրագրի շրջանակում Երևան քաղաքի պատմության թանգարան և «Էրեբունի | Աշխատակազմի հանրակրթության | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կարգի մրցույթներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկում | առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացման շարունակականության ապահովում: | պատմահնագիտական արգելոց-թանգարան» այցելած երեխաների խմբերում ընդգրկվել են դպրոցի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները; | վարչություն 1-ին,2-րդ և 4-րդ եռամսյակ | |
| 16. | Մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ միջոցառումների իրականացում | Մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ միջոցառումների իրականացում: | Ապահովվել է մանկապարտեզ՝ երեխաների ընդունելության և հաշվառման գործընթացի թափանցիկությունը՝ գործող «Մանկապարտեզ» էլեկտրոնային համակարգի շնորհիվ: | Հունվար-դեկտեմբեր | |
| 17. | Մանկապարտեզների շենքերի վերանորոգում և հիմնանորոգում | Մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում: | Տես շինարարություն և բարեկարգում: | | |
| 18. | Մանկապարտեզներում ներառված երեխաների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումներ՝ համապատասխան ՀԿ-ների աջակցությամբ | Մանկապարտեզներում ներառված երեխաների հետ աշխատող մասնագետների վերապատրաստումներ՝ համապատասխան ՀԿ-ների աջակցությամբ: | Իրականացվել են «Հույսի կամուրջ» ՀԿ-ի, «Յունիսեֆի» համագործակցությամբ և Լոնդոնի «Բաց հասարակության հիմնադրամի» վաղ մանկության գրասենյակի աջակցությամբ՝ «Նախադպրոցական հաստատություններում ներառական կրթական միջավայրի խթանում» ծրագրի շրջանակում կազմակերպված վերապատրաստումները: Գործընթացը շարունակական են: | Աշխատակազմի հանրակրթության վարչություն, համապատասխան ՀԿ-ներ, մասնագետներ: 2-րդ 4-րդ եռամսյակ | |
| 19. | Մանկապարտեզների բոլոր աշխատակիցներին առողջապահության | Մանկապարտեզների բոլոր աշխատակիցներին առողջապահության ապահովագրության փաթեթների տրամադրում: | Քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների բոլոր աշխատակիցներին տրամադրվել է առողջապահության ապահովագրության փաթեթներ: | Աշխատակազմի հանրակրթության և առողջապահության վարչություններ, | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ապահովագրության փաթեթների տրամադրում | | | 1-ին եռամսյակ | |
| 20. | Մանկապարտեզների գործունեության առավել թափանցիկության և հրապարակայնության ապահովում: | | Yerevan.am կայքի «Կրթություն» էջի «Նախադպրոցական կրթություն» բաժնում, ինչպես նաև աշխատակազմի հանրակրթության վարչության, մանկապարտեզների և վարչական շրջանների ֆեյսբուքյան էջերում լուսաբանվում է մանկապարտեզի առօրյան: | Հունվար-դեկտեմբեր | |
| **Առողջապահություն** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Հետազոտություններ ի ձեռքբերում | Լիարժեք ախտորոշում և արդյունավետ բուժում իրականացնելու նպատակով Երևանի բնակիչների համար նախատեսվում է ձեռք բերել թանկարժեք և դժվարամատչելի հետազոտություններ, այդ թվում՝ Կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 135 հատ, Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 60 հատ: | **21.12.2017թ. ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39**<br>**26.12.2017թ ԵՔ-ԳՀԾՁԲ-18/40**<br>Մատուցվել է 135 կոմպյուտորային տոմոգրաֆիայի ծառայություն:<br>Մատուցվել է թվով 60 հատ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն: | ՄԻԲՍ ՍՊԸ 25.12.2018թ.<br>ՄԻԲՍ ՍՊԸ 25.12.2018թ. | |
| 2. | Բուժսարքավորումների ձեռքբերում | Որակյալ բժշկական ծառայության մատուցման և մատչելիության բարձրացման նպատակով Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների համար 2018թ. նախատեսվում է ձեռք բերել նոր բուժսարքավորումներ և բժշկական պարագաներ, մասնավորապես՝ 1 ռենտգեն ապարատ, 1 ցիստոսկոպ, 1 | **19.02.2018թ. ԵՔԲՄԱՊՁԲ-18/15-1**<br>**19.02.2018թ. ԵՔԲՄԱՊՁԲ-18/15-2**<br>**28.02.2018թ. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-1816-1**<br>Ձեռք է բերվել՝ 1 ռենտգեն ապարատ, 1 ցիստոսկոպ, 1 իմունոֆերմենտային անալիզատոր, 2 ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 2 տվիչով /դյուրակիր/, 5 հարվածաալիքային թերապիայի սարքավորում, 15 զալվանիզացիայի սարքավորում: | ԱՎԷմեդ ՍՊԸ 30.06.2018թ.<br>ԹԱԳ ՀԷՄ ՍՊԸ 30.06.2018թ.<br>Վիոլա ՍՊԸ 30.06.2018թ. | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իմունոֆերմենտային անալիզատոր, 2 ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 2 տվիչով /դյուրակիր/, 5 հարվածաալիքային թերապիայի սարքավորում, 15 գալվանիզացիայի սարքավորում: | | | |
| 3. | Սքրինինգային հետազոտության ձեռքբերում | Երևան քաղաքի բնակչության շրջանում ածխաջրատային փոխանակության խանգարմամբ (ավելցուկային քաշ, ճարպակալում, մետաբոլիկ համախտանիշ, շաքարային դիաբետ) և սրտանոթային շատ բարձր ռիսկով այցելուների տարածվածության աստիճանը գնահատելու, ինչպես նաև ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան նորարական բուժական միջոցառումների կիրառմամբ՝ բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով Երևան քաղաքի 2000 բնակիչների շրջանում նախատեսվում է իրականացնել սքրինինգային հետազոտություն: | **09.02.2018թ. ԵՔ-ԳՀԾՁԲ-18/60**<br>Երևան քաղաքի 2000 բնակիչների շրջանում իրականացվել է սքրինինգային հետազոտություն: Աշխատանքները իրականացվել են 4 փուլով: Արդյունքում ընտրված 200 քաղաքացիների տրամադրվել է անհրաժեշտ լաբարատոր ծառայություններ: | Քաղաքային էնդոկրին դիսպանսեր ՓԲԸ 25.12.2018թ. | |
| 4. | Երևանի ենթակայության բուժհաստատություններում տանիքների հիմնանորոգում | Երևանի ենթակայության թվով 15 բուժհաստատություններում կատարվելու են տանիքների հիմնանորոգման աշխատանքներ: | Կատարվել են թվով 10 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներ.<br>1. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1** «Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ<br>2. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-2** «Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>3. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-2** «Թիվ 9 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>4. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1** «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>5. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-3** «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>6. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-4**«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>7. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-1**«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ, | Աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն<br>1. «Արտշին 1» ՍՊԸ<br>2.«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ<br>3.«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ | Բյուջեով հաստատվել է թվով 10 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 8.**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/45-5**«Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ,<br>9. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/72-1** «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ,<br>10. **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/72-2** «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ | 4. «Արտշին 1» ՍՊԸ<br>5. «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ<br>6. «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ<br>7. «Արտշին 1» ՍՊԸ<br>8. «Սմալա» ՍՊԸ<br>15.03.-30.08.18թ.<br><br>9. «ԳԵՎ Էլլ Պլաստ» ՍՊԸ<br>10. «Աննա-80» ՍՊԸ<br>02.05.-30.08.18թ. | |
| 5. | Բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացում | Երևան քաղաքի բնակչության շրջանում /մասնավորապես քաղցկեղով հիվանդ, կամ ռիսկի խմբերում ներառված բնակչության շրջանում/ ճիշտ սնուցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով, հիմնվելով ESMO միջազգային ուղեցույցների վրա, նախատեսվում է խմբագրել և տպագրել 200 հատ «Սնուցում և քաղցկեղ» գրքույկ, որը կպատասխանի և բժիշկների և հիվանդների հարցերին: | **12.01.2018թ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/8**<br>Խմբագրվել, տպագրվել է 200 հատ Սնուցում և քաղցկեղ գրքույկ, որի նպատակն է պատասխանել քաղաքացիներին հուզող հարցերին:<br>Գրքույկները տրամադրվել են Երևան քաղաքի գլխավոր քիմիոթերապևտ Հակոբի Գյոկչյանին, այնուհետև վերջինիս կողմից աշխատակազմի առողջապահության վարչության համապատասխան մասնագետների հետ բաշխվել են Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատ-ություններ ուռուցքաբանական կաբինետներին: | Շուշան Տեխնիկս ՍՊԸ<br>31.03.2018 | |
| **Սոցիալական ապահովություն** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր | Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում:<br>Աջակցություն ՍԱՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք | Փաստագրվել են շուրջ 18683 կարիքավոր ընտանիքներ, իսկ միջին հաշվով շուրջ 15719 /ընտանիքներ ստացել են ընտանեկան, սոցիալական նպաստներ և հրատապ օգնություններ:<br><br>12 ՍԱՏԲ-ներում ուսումնասիրվել են ընտանեկան, | Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն<br><br>12 ՍԱՏԲ-ների | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ունեցող բնակչության տարբեր խմբերի պետական նպաստների նշանակման գործընթացում: 2018թ. ընթացքում Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 17200 ընտանիքներ, որոնք կստանան պետական նպաստներ: | սոցիալական նպաստ և հրատապ օգնություն ստացող ընտանիքների շուրջ 329 գործերի հիմքային և համակարգչային փաստաթղթերի ճշտությունը, արդյունքում ավելի վճարված նպաստների գումարները վերադարձվել են ՀՀ պետական բյուջե: | Յուրաքանչյուր ամիս | |
| 2. | Սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում | Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում մայրաքաղաքի ևս 2 վարչական շրջաններում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, որը կնպաստի համալիր սոցիալական ծառայությունների մատուցմանը: Արդյունքում ակնկալվում է նոր որակի ծառայությունների տրամադրում, սոցիալական ծառայությունների մատչելի մատուցում, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում և հասցեականության մեծացում: | Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կազմակերպվել և շահագործման է հանձնվել Մալաթիա-Սեբաստիա համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնը /ՀՍԾՏԿ-ն), որն էլ Երևան քաղաքում /մյուս 5-ի հետ/ գործում է մեկ պատուհանի սկզբունքով: | Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն | Մյուս համալիր կենտրոնների ստեղծման գործընթացը շարունակական է և քննարկման փուլում է: |
| 3. | Մարտի 8-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում | Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող | Կազմակերպվել և իրականացվել է կանաց միջազգային օրվան՝ մարտի 8-ին նվիրված հանդիսություն Հ.Պարոնյանի անվան թատրոնում՝ բոլոր սոցիալական խմբերը ներկայացնող 1400 կանանց /այդ թվում նաև սիրիահայերի/ մասնակցությամբ: Ներկաներին է փոխանցվել Երևանի քաղաքապետի շնորհավորական ուղերձը, տոնական | Մարտի 8 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կանանց համար: | ներկայացման ավարտից հետո կանանց տրամադրվել են նվերներ: | | |
| 4. | Տարեցների սոցիալական սպասարկման ծրագրերի իրագործում | Կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման ծրագրերի իրագործումը ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով, նաև պետություն-ՀԿ-համայնք համագործակցությամբ կազմակերպված ցերեկային խնամքի կենտրոններում: Նախատեսվում է տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում, ցերեկային խնամքի կենտրոնների (բարեգործական ճաշարանների) գործունեության կազմակերպում: | Իրականացվել են այցելություններ և հսկողություն Երևան քաղաքի 10 վ/շ-ներում գործող բարեգործական ճաշարանների և տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնների նկատմամբ, նկատված թերացումների վերաբերյալ արվել են դիտողություններ, խրախուսվել են լավագույն կազմակերպությունների ղեկավարները: | Հունվար-դեկտեմբեր | |
| 5. | Ապրիլի 7-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում | Ապրիլի 7-ի՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ կիրականացվեն այցելություններ երևանաբնակ բազմանդամ ընտանիքներ ունեցող մայրերին, երիտասարդ բազմազավակ մայրերին, նոր մայրացող կանանց և կտրամադրվի աջակցություն: Շուրջ 250 ընտանիքների կտրամադրվեն կենցաղային և այլ անհրաժեշտ ապրանքներ: | Մայրության և գեղեցկության օրվան նվիրված միջոցառումների շրջանակում անապահովության գնահատման համակարգում հաշվառված 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների, հայրենիքի պաշտպանության համար ապրիլյան պատերազմում զոհվածների մայրերին ու կանանց, սիրիահայ բազմազավակ կանանց, ինչպես նաև մայրանալ պատրաստվող կանանց տրամադրվել են խոհանոցային պարագաներ: | Ապրիլի 7 | |
| 6. | Ապրիլի 24-ին միջոցառումների կազմակերպում | 2018թ. ապրիլի 24-ին Մեծ Եղեռնը վերապրած քաղաքացիներին կտրամադրվի դրամական օգնություն: | Ապրիլի 24-ի կապակցությամբ՝ Եղեռնը վերապրած երկու երևանաբնակ քաղաքացիների տրամադրվել են դրամական աջակցություններ: | Ապրիլի 24 | |
| 7. | Սոցիալապես անապահով | Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների շուրջ 1200 | Թվով 1200 երեխաներ իրենց հանգիստը անց են կացրել Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում: | 2-3-րդ եռամսյակներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում | երեխաներ /7-13 տարեկան/ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում: | | | |
| 8. | Տարեցների օրվա կապակցությամբ միջոցառումների կազմակերպում | Հոկտեմբերի 1-ին տարեցների օրվա կապակցությամբ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) կտրամադրվի դրամական օգնություն և կենցաղային անհրաժեշտ ապրանքներ: | 100 և ավելի տարիք ունեցող 17 տարեցներին տրամադրվել է դրամական օգնություն: | Հոկտեմբերի 1 | |
| 9. | Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ միջոցառումների կազմակերպում | Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ կիրականացվեն միջոցառումներ: | «Հաշմանդամներություն ունեցող անձանց հիմնահարցերով Երևանի քաղաքային հանձնաժողովի» 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքների համաձայն սոցիալական ծրագրերում /մարտի 8-ի, ապրիլի 7, ապրիլի 24-ի, դեկտեմբերի 3-ի հաշմանդամների միջազգային օրվա և Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ/ առաջնահերթության կարգով ընդգրկվել են հաշմանդամություն ունեցող անձիք և ընտանիքներ, ինչպես նաև սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպություններ, մասնավորապես՝ «Գերմանական կարմիր խաչ», «Առաքելություն Հայաստան», «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Փյունիկ:<br><br>Արցախյան պատերազմում, ինչպես նաև հայրենիքի սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող թվով 145 անձանց տրամադրվել է դրամական աջակցություն: | Հունվար-փետրվար | |
| 10. | Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ | Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով | Սոցիալապես անապահով ընտանիքների 4000 երեխաների համար կազմակերպվել են միջոցառումներ Ամանորի և Սուրբ | Դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միջոցառումների կազմակերպում | ընտանիքների 4000 երեխաների համար նախատեսվում է կազմակերպվել միջոցառումներ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: | Ծննդյան տոների կապակցությամբ: | | |
| 11. | Սոցիալական կարիքի մեջ գտնվող երևանաբնակ քաղաքացիներին կցուցաբերվի դրամական օժանդակություն | Սոցիալական կարիքի մեջ գտնվող երևանաբնակ քաղաքացիներին կցուցաբերվի դրամական օժանդակություն: | Ընտանիքի օրվա կապակցությամբ անապահովության գնահատման համակարգում հաշվառված 8 և ավելի անդամ ունեցող բազմանդամ 50 ընտանիքների տրամադրվել է դրամական աջակցություն: | Հունվար-դեկտեմբեր | |
| 12. | Զորամասերի այցելությունների կազմակերպում | Սոցիալապես անապահով երևանաբնակ շուրջ 3000 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց զինվոր որդիներին: | Իրականացվել է երևանաբնակ շուրջ 1700 ծնողների՝ սահմանամերձ գոտիներում՝ Տավուշի, Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի զորամասերում ծառայող իրենց զինվոր որդիների հետ տեսակցության ծրագիրը : Ծրագրի շրջանակներում լավագույն հրամանատարներն ու զինծառայողները պարգևատրվել են Երևանի քաղաքապետի շնորհակալագրերով, տվյալ զորամասերին նվիրաբերվել են անհրաժեշտ պարագաներ, հոգ է տարվել ծնողների անվտանգ և հարմարավետ տեղափոխության և սննդի մասին: | ապրիլի 27-28 | Հոկտեմբերին նախատեսված ծրագրի 2-րդ փուլը չի իրականացվել |
| 13. | Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծում, նրանց աստիճանական ինտեգրում և սոցիալական աջակցության ծրագրեր | Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծում, նրանց աստիճանական ինտեգրում և սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում: Ծրագրի շրջանակում կիրականացվի տարաբնույթ սոցիալական աջակցությունների և ծառայությունների մատուցում կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց, քաղաքային | Մասնակցություն է ցուցաբերվել «Հաշմանդամություն ունեցող անձանց ազգային հանձնաժողովի» նիստին, որտեղ ներկայացվել է «Հաշմանդամների հիմնահարցերով Երևանի քաղաքային հանձնաժողովի» 2018 թվականին կատարած աշխատանքները և նշված հանձնաժողովի գործունեության 2018թ. ծրագիրը:<br>Երևանի քաղաքապետարանի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2019 թվականի տարեկան ծրագրում ներառելու նպատակով առաջարկվող միջոցառումները ամփոփվել և ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների համար կառանձնացվեն գծանշված տարածքներ: | Բացի այդ իրականացվել է ՀՀ Երևան քաղաքի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող քաղաքային հանձնաժողովի ընդլայնված նիստ՝ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախաձեռնությամբ: | | |
| 14. | Տեղահանված սիրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր | Կիրականացվեն սիրիահայերի հասարակական և տնտեսական ինտեգրման, ինչպես նաև սոցիալական օժանդակության ծրագրեր: Կշարունակվի կարիքավոր սիրիահայ ընտանիքներին տարաբնույթ սոցիալական աջակցությունների տրամադրումը /այդ թվում՝ երեխաներին արտահերթ հիմունքներով ՆՈՒՀ-երում և դպրոցներում ընդգրկումը/, հասարակական կյանքին և փոքր բիզնեսների հիմնադրման միջոցով տնտեսական ինտեգրումը: Սիրիահայերի սոցիալական պաշտպանության քաղաքականությունը նպատակաուղղված է վերջիններիս համար հավասար հնարավորությունների ստեղծմանը՝ կյանքի բոլոր ոլորտներում: | Սոցիալական աջակցություններ են տրամադրվել շուրջ 1134 կարիքավոր սիրիահայ ընտանիքների, որոնցից՝ դրամական աջակցություններ են տրամադրվել՝ 95, կենցաղային իրեր, հագուստեղեն՝ 360, պարենային աջակցություններ՝ 679 կարիքավոր սիրիահայ ընտանիքների: Բացի այդ՝ 60 ընտանիքներ ընդգրկվել են պետական սոցիալական աջակցության ծրագրերում: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15. | Անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում | Կշարունակվի նաև անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորման գործընթացը: | Տարվա ընթացքում մայրաքաղաքի փողոցներից հավաքագրվել և անօթևանների ժամանակավոր կացարան են տեղափոխվել 66 անօթևաններ, որոնցից 8-ը՝ քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձիք են: | Հունվար-դեկտեմբեր | |
| 16. | Բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրագործում | Կշարունակվեն բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը: | Վարչական շրջանների հետ համագործակցությամբ բազմազավակ բազմաթիվ ընտանիքների տրամադրվել է կենցաղային, պարենային, դրամական աջակցություններ: | Հունվար-դեկտեմբեր | |
| 17. | Համագործակցությու ն ՀԿ-երի հետ | Կշարունակվի համագործակցությունը հասարակական կառույցների հետ: | Քաղաքապետարանի և ՀԿ-ների համագործակցությամբ, որոշ դեպքերում նաև համաֆինանսավորմամբ Երևանում իրենց գործունեությունն են շարունակել բարեգործական 19 ճաշարանները՝ որտեղ օրական մեկ անգամ տաք կերակուր են ստանում կարիքավոր շուրջ 2400 շահառուներ:<br>Համագործակցությունը շարունակվել է Երևան քաղաքում սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող «Գերմանական կարմիր խաչ», «Առաքելություն Հայաստան», « Հայ օգնության ֆոնդ», «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Սիրիահայերի խնդիրների համակարգման խորհուրդ» կազմակերպությունների հետ և այլն: | Հունվար-դեկտեմբեր | |
| **Մշակույթ** | | | | | |
| **Հ/հ** | **Ծրագրի կամ միջոցառման անվանումը** | **Նախատեսված աշխատանքների նկարագիր** | **Աշխատանքների իրականացման գործընթաց** | **Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ** | **Նշումներ** |
| 1. | Պետա կան և ազգային տոներին նվիրված | Նախատեսվում է իրականացնել պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումների շարք՝ | Կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.<br>Ազատության հրապարակ- «Նոր տարին Երևանում 2018», «Շնորհավոր 2018» տոնական ծրագիր, «2018թ. Ամանորը | Մշակույթի վարչություն<br>Հունվար | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միջոցառումների կազմակերպում | Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, «Գարնանամուտ», Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Գարուն-Երևան», «Ողջույն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2018» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, «Երևանցին» հեռուստաշարք՝ ամիսը 2 անգամ, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին: Մայրաքաղաքում տարվա կտրվածքով նախատեսվում է անցկացնել նաև միջազգային միջոցառումների շարք և մշակութային ծրագրեր ու նախագծեր՝ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «ՀայՖեստ» միջազգային թատերական | Երևանում», «Սուրբ Ծնունդը՝ Երևանում», «Բաց դռների քաղաք», «Իմ հին ու նոր տարի» տոնական համերգային ծրագիր:<br>Երևանի քաղաքապետարանը և Արարատյան Հայրապետական թեմը Բուն Բարեկենդանի տոնի առիթով կազմակերպել են տոնական քայլերթ, որին մասնակցել են բազմաթիվ երևանցիներ:<br>Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին ընդառաջ մայրաքաղաքում ամբողջ օրվա ընթացքում կանանց համար կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ և անակնկալներ:<br>Կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ Ապրիլի 7-ի կապակցությամբ:<br>Իրականացվել է Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին նվիրված միջոցառում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի մասնակցությամբ:<br>Ազատության հրապարակում կազմակերպվել է «Վերջին զանգ» միջոցառումը, որն ուղեկցվել է տոնական համերգով և հրավառությամբ:<br>Հունիսի 1-ից մեկնարկեց «2800-ամյա Երևանը՝ փոքրիկների համար» միջոցառումների շարք՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության օրվան և Երևանի հիմնադրման 2800-ամյակին:<br>«Երևանյան ամառ 2018» ծրագրի շրջանակում կազմակերպվել են տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ:<br>Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի է ունեցել երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի սաների մասնակցությամբ «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի և միացյալ երգչախմբի համերգը:<br>Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից նշվող Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության կամ Վարդավառի տոնին | Հունվար 13<br><br>Մարտի 8<br><br>Ապրիլի 7<br><br>Ապրիլի 24<br><br>Հունիսի 1<br><br>Հունիս-օգոստոս<br><br>Հունիսի 24<br><br>Հուլիսի 7 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | փառատոն, «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոն, «Ռեանիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի փառատոն և այլն, որոնք իրականացվում են Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: | նվիրված միջոցառումների մեկնարկն այս տարի ևս տրվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց սկիզբ առած տոնական երթով: Վարդավառի տոնին նվիրված գլխավոր միջոցառումը, ավանդույթի համաձայն, տեղի է ունեցել մայրաքաղաքի Կարապի լճում:<br>Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Կարապի լճի տարածքում անցկացվել է արդեն ավանդական դարձած ձմերուկի 6-րդ փառատոնը:<br>Երևանի քաղաքապետարանի Ճեմասրահում տեղի է ունեցել «Երևանը երևանցիների աչքերով» խորագիրը կրող լուսանկարչական ցուցահանդեսի բացումը՝ նվիրված մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյա հոբելյանին:<br>Հայաստանի Հանրապետությունում անցկացվող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի շրջանակում մայրաքաղաքի Ազատության հրապարակում բացվել է Ֆրանկոֆոն ավան, որտեղ ֆրանկոֆոն 38 երկրներ ներկայացել են իրենց տաղավարներով: Ավանը կրում էր «Ապրել և ստեղծել միասին» խորագիրը:<br>Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյա հոբելյանի առթիվ Երևան քաղաքի պատմության թանգարանում բացվել է «Երևան. բրոնզի դարից վարդագույն տուֆի մայրաքաղաք» խորագրով ցուցահանդեսը:<br>Դեկտեմբերի 21-ին երկրի գլխավոր ու նոր տոնածառը ներկայացավ Երևանի բնակիչներին ու քաղաքի հյուրերին: 35 մետր բարձրությամբ ու 1500 խաղալիքով զարդարված տոնածառի լույսերը վառել է Երևանի քաղաքապետը:<br>Իրականացվել են ամանորյա տարաբնույթ միջոցառումներ: | Հուլիսի 23<br>Սեպտեմբերի 10<br>Հոկտեմբերի 6-12<br>Հոկտեմբերի 24<br>Դեկտեմբերի 21<br>Դեկտեմբեր-հունվար | |
| 2. | Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ | 2018 թվականին կիրականացվեն մշակութային տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ Երևանի քույր և | Երևանի և Մոսկվայի միջև մշակութային համագործակցության ընդլայնման ծրագրերի շրջանակում Երևան է ժամանել Ի. Ն. Վորոնովայի անվան «Նոր անուններ» | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համատեղ մշակութային ծրագրերի իրականացում | գործընկեր քաղաքների հետ համատեղ, որոնք, տարածելով և հանրահռչակելով հայկական մշակույթը, կստեղծեն և կամրապնդեն համագործակցության նոր շրջանակներ: | միջտարածաշրջանային բարեգործական հասարակական հիմնադրամի պատվիրակությունը: Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ և հիմնադրամի նախաձեռնությամբ Կոմիտասի անվան ինստիտուտ-թանգարանում մեկնարկել և անց են կացվել քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների սաների հատուկ լսումները:<br>Երևանի Հանրապետության հրապարակում բոլոր երևանցիների և մայրաքաղաքի հյուրերի համար ելույթ է ունեցել ՌԴ ՊՆ կենտրոնական ռազմական նվագախումբը: Համերգային ծրագիրը նվիրված է եղել մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակին:<br>Երևան և Մոսկվա քաղաքների գործադիր իշխանության մարմինների միջև 2018-2021թթ. համար համագործակցության ծրագրով 2018թ. դեկտեմբերի 17-19-ը Երևանում անց են կացվել Մոսկվայի մշակույթի օրերը: | | |
| 3. | Միջազգային մշակութային միջոցառումների կազմակերպում | Նախատեսվում է իրականացնել Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկ ինքնության պահպանության ապահովմանն ու ինքնաարտահայտմանն ուղղված ծրագրեր: | «Երևան 2800» տոնակատարության շրջանակում շնորհավորանքներ են հղել մայրաքաղաքում բնակվող ազգային փոքրամասնությունները՝ անգլիական այգում տեղակայված հարթակում հանդես են եկել մայրաքաղաքում բնակվող ազգային փոքրամասնությունները: Տարբեր համայնքներ ներկայացնող համույթներն ու անհատ կատարողները ներկայացել են ազգային երգ ու պարով, Երևանի հիմնադրման տարեդարձին նվիրված կատարումներով:<br>Տոնական միջոցառմանը մասնակցել են հունական, վրացական, բելառուսական, ռուսական, հրեական, գերմանական, եզդիական, քրդական, ասորական, ուկրաինական և լեհական համայնքների ներկայացուցիչները: | Հոկտեմբերի 21 | |
| 4. | **Գրադարաններ** | | | | |
| 4.1 | «Հայաստանի գրադարանների | «Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրի | «Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակում շարունակվում է «Ա.Իսահակյանի | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ավտոմատացված ցանց» ծրագիր | շրջանակում «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը կշարունակի իր աշխատանքները և գրադարանի գրքային ֆոնդը կմուտքագրվի ընդհանուր տեղեկատվական բազա: Կշարունակվի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի թվայնացման, համալրման գործընթացը և նոր ծրագրերի տեղադրումը թվային բազայում: Տեղադրված է նաև հատուկ խմբի համար /տեսողական խնդիրներ ունեցող/ «ԱՐԵՎ» էլեկտրոնային-թվային համակարգը, իսկ լսողական խնդիրներ ունեցողների համար՝ «ԷԼԳՐԱԴ»-ի թվային բազաների «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը:<br><br>Կիրականացվի ազատ ժամանցի կազմակերպում՝ գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ: Կկազմակերպվի գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը, ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի | անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի գրքային ֆոնդի մուտքագրումը ընդհանուր տեղեկատվական բազա: Մուտքագրվել է 31900 անուն՝ 75885 միավոր գիրք: ՀՈԱԿ-ի ԿԳ-ն և գրադարան մասնաճյուղերն ապահովված են նաև 4 անվճար WI-FI կապով:<br>ԿԳ-ում գործում են Ամերիկյան, Բրիտանական, Ասիական, Ֆրանկոֆոնիայի կենտրոնները և այդ կենտրոններում տարվա ընթացքում կազմակերպվել են 34 ֆիլմերի անվճար ցուցադրություն, ամերիկյան և բրիտանական անգլերենի, ֆրանսերենի խոսակցական ակումբների 47 պարապմունք, գրքի ակումբի 60 հանդիպում, մանկական և դեռահասների ակումբների 155 հանդիպում, անգլերեն, պարսկերեն և ֆրանսերեն լեզվի ուսուցման անվճար 289 ժամ դասընթաց: Երևանի «Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի» հետ շարունակվել են ընթերցողների էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդրման և զարգացման աշխատանքները:<br>Քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում կազմակերպվել են հիշարժան և հոբելյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ, գրքի շնորհանդեսներ, ցերեկույթներ: Գրադարաններում անցկացվել են գրական, գրական–երաժշտական, հուշ-երեկոներ, կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, իրականացվել են գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավվման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության վարման կարևորագույն միջոց: Կազմակերպվել են գրքերի քննարկումներ և շնորհանդեսներ, մանկական գրքի շաբաթ, հիշարժան և հոբելյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ, մի շարք միջոցառումներ, ցերեկույթներ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դիտումներ և այլն: | Կազմակերպվել են Հայոց բանակի, Կանանց միջազգային, թատրոնի միջազգային օրերին, Բարիկենդանին, մայրության և գեղեցկության տոնին, Հայոց ցեղասպանության օրվան, երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2018» եռամսյա ծրագրին, ՀՀ անկախության տոնին, «Երևան 2800» տոնակատարությանը, Ամանորին նվիրված միջոցառումներ: | | |
| 5. | **Թանգարաններ** | | | | |
| 5.1 | Թանգարաններում ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպում | Թանգարաններում նախատեսվում է իրականացնել ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեություն, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում, թանգարանային ֆոնդի համալրում, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կկազմակերպվեն նոր ցուցադրություններ: Թանգարաններում կկազմակերպվեն պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ և ցուցադրություններ, ինչպես նաև միջոցառումներ՝ նվիրված «Թանգարանների միջազգային օրվան» և «Եվրոպական ժառանգության օրվան»: Նախատեսվում է կազմակերպել միջոցառումների շարք՝ նվիրված Երևանի հիմնադրման 2800 ամյակին: | Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարանները կազմակերպել են աշխատանքները հետևյալ ուղղություններով՝ գիտացուցադրական, գիտահետա-զոտական, ֆոնդային և գիտալուսավորական-մասսայական: Տարաբնույթ մշակութային, ճանաչողական, երիտասարդական, ժամանցային, ուսուցողական և այլ բնույթի միջոցառումներ են կազմակերպվել՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ում, «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ում, «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ում, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, Ժամանակակից արվեստի թանգարանում: Թանգարաններում կազմակերպվել են պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ և ցուցադրություններ, ինչպես նաև միջոցառումներ՝ նվիրված «Թանգարանների միջազգային օրվան» և «Եվրոպական ժառանգության օրվան»: Կազմակերպվել է միջոցառումների շարք՝ նվիրված Երևանի հիմնադրման 2800 ամյակին: | Հունվար-դեկտեմբեր | |
| 5.2 | Էրեբունի | «Էրեբունի» պատմահնագիտական | 2018թ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց- | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածքում աշխատանմքների իրականացում | արգելոց-թանգարանի տարածքում կշարունակվեն պարբերաբար իրականացվող գիտական ուսումնասիրություններն և պեղումները:<br><br>Շարունակական բնույթ են կրելու այցելուների սպասարկման բարելավմանն ուղղված աշխատանքները: | թանգարանն իր «Կարմիր բլուր» և «Շենգավիթ» մասնաճյուղերով իրականացրել է հուշարձանների պահպանության, մաքրման, ամրակայման, ֆոնդային, ցուցադրական, էքսկուրսիոն-մասսայական, սպասարկման, գիտագործնական, գիտակրթական, գիտահետազոտական, տնտեսական, մարկետինգի, հանրահռչակման և այլ աշխատանքներ:<br>Թանգարանն իրականացրել է գիտական ուսումնասիրություններ, արխիվացրել է «Էրեբունի» և երկու մասնաճյուղ թանգարաններին վերաբերվող փաստաթղթեր, պեղումների օրագրեր, հոդվածներ, պեղումների լուսանկարներ, կազմակերպված ցուցահանդեսներին վերաբերվող նյութեր: | | |
| 5.3 | Էրեբունի հնավայրի պահպանմանն, զբոսաշրջության խթանման և տուրիստական ծառայությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքներ | Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի և «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի /CRAterre/ համագործակցության ծրագրի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն Էրեբունի հնավայրի պահպանման, պատմամշակութային արժևորման, զբոսաշրջության խթանման և տուրիստական ծառայությունների ընդլայնման համար | Մայիսի 5-ին Երևանի քաղաքապետարանում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի (CRAterre) ներկայացուցիչների և Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի դասախոս և EVS-LAURE լաբորատորիայի հետազոտող Սյուզան Մոնոյի հետ:<br>Ապրիլի 13-ին Երևանի քաղաքապետարանում տեղի է ունեցել Էրեբունի հնավայրի պահպանման ու վերականգնման աշխատանքների իրականացման ֆինանսական և տեխնիկական աջակցության ծրագրի հետ կապված տեսախորհրդակցություն-քննարկում Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի և «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի (CRAterre) ներկայացուցիչների հետ:: | Հունվար-դեկտեմբեր | |
| 6. | **Թատրոններ** | | | | |
| 6.1 | Թատրոնների խաղացանկերի համալրում | Նախատեսվում է իրականացնել շուրջ 10-15 նոր բեմականացում, համալրել ստեղծագործական կազմը, բարձրացնել | «Նոր տարին Երևանում 2018» միջոցառումների ծրագրի շրջանակում տոնական օրերին Երևանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ներկայացումների մատուցվող ծառայությունների որակը, իրականացնել բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինում, ապահովել մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոններին: | հանդիսատեսի և «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոններում ցուցադրվել են տոնական ներկայացումներ: Թատրոններում ընթացել են ըստ խաղացանկերի ներկայացումներ, կատարվել է խաղացանկերի համալրում՝ **«Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի** կողմից հանդիսատեսի դատին է հանձնվել 2 նոր ներկայացում: **«Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ**-ի կողմից բեմադրվել է 3 նոր ներկայացում: **Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում** բեմադրվել 2 նոր ներկայացում: 2018թ. պատվիրվել է Դրամատիկական թատրոնի համար նախագծանախահաշվային փաստաթղթեր բեմի լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման նպատակով: | | |
| 7. | **Երաժշտական և արվեստի դպրոցներ** | | | | |
| 7.1 | Երաժշտական և արվեստի դպրոցներում միջոցառումների կազմակերպում | Կկազմակերպվեն համերգներ, հանրապետական ու միջազգային մրցույթներ, փառատոններ երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ: Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում կանցկացվի Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը, լավագույն սաները հնարավորություն կունենան ելույթ ունենալ կամերային և սիմֆոնիկ նվագախմբերի հետ: | Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ կազմակերպվել են համերգներ, հանրապետական ու միջազգային մրցույթներ, փառատոններ երաժշտական և արվեստի դպրոցների: Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում անց է կացվել Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը: | Հունվար-դեկտեմբեր | |
| 7.2 | Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիր | Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը: | Ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանման, տարածման և հանրահռչակման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիր, որի շրջանակում երաժշտական և | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արվեստի դպրոցներում սովորում է 610 աշակերտ: | | |
| 7.3 | Երաժշտական և արվեստի դպրոցներում գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում | Երաժշտական և արվեստի դպրոցների համար ձեռք են բերվելու անհրաժեշտ գույք և երաժշտական գործիքներ: | Մայիսի 5-ին քաղաքապետարանի ճեմասրահում կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին երաժշտական նոր գործիքներ հանձնելու հանդիսավոր արարողությունը: 2018թ. Երևանի քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին տրամադրվել է 31 անուն 243 երաժշտական գործիք: | Հունվար-դեկտեմբեր | |
| 7.4 | «Բաց դաս» խորագրով ծրագրի իրականացում | Կշարունակվի «Բաց դաս» խորագրով ծրագրի իրականացումը: Ծրագրի շրջանակներում մասնագետներն ու դպրոցի սաները կկազմակերպեն բացօթյա հանրային դասընթացներ՝ ներգրավելով հանրության լայն շերտեր: | Տարվա ընթացքում Երևանի քաղաքպետարանի ենթակայության բոլոր երաժշտական և արվեստի դպրոցներում, մշակույթի կենտրոններում պարբերաբար կազմակերպվել և իրականացվել են բաց դասեր: | Հունվար-դեկտեմբեր | |
| 8. | **Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ** | | | | |
| 8.1 | Բնակչության հոգևոր, գեղագիտական, ստեղծագործական ունակությունների, ռազմահայրենասիրական դաստիարակության ձևավորմանն ուղղված ծրագրեր | Ստեղծագործական կենտրոնների և մշակույթի տների միջոցով նախատեսվում է ստեղծել համապատասխան պայմաններ, իրականացնել ծրագրեր՝ ուղղված բնակչության հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորմանը: | Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են տոնական, ազգային տոներին նվիրված մշակութային միջոցառումներ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ Ամանոր, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Բանակի օր, Մարտի 8, թատրոնի միջազգային օր, մայրության և գեղեցկության տոնին, Հայոց ցեղասպանության օրվան , երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Վարդավառ, ՀՀ Սահմանադրության օր, ՀՀ անկախության տոն, «Երևան 2800» տոնակատարություն:<br>Կենտրոնների մի շարք խմբեր ակտիվ մասնակցել են «Երևանյան ամառ 2018» ծրագրով իրականացվող միջոցառումներին: | Հունվար-դեկտեմբեր | |
| 9. | Այլ մշակութային կազմակերպություններ | | | | |
| 9.1 | Համերգներին, փառատոներին, ցուցահանդեսներին մասնակցություն | Կապահովվի վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը փառատոններին, համերգներին, ցուցահանդեսներին | Ապահովվել է «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «ՀայԱրտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի, «Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «Երևան» փողային նվագախմբի մասնակցությունը | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում։<br>Նախատեսվում է մեծացնել հանրության հետ շփման շրջանակները, որը կնպաստի կազմակերպությունների որակի բարձրացմանն ու հանրահռչակմանը։ | փառատոններին, համերգներին, ցուցահանդեսներին ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում։<br>Կազմակերպվել են տարաբնույթ մշակութային, ուսուցողական, կրթական և այլ բնույթի ծրագրեր։ | | |
| 10. | Կենդանաբանական այգում վերակառուցման ծրագրի իրականացում | 2018թ. կենդանաբանական այգին կվերաբացվի նոր լուծումներով՝ էլ ավելի համապատասխանելով միջազգային չափորոշիչներին։ Մասնավորապես կբացվի միջազգային չափորոշիչներին համապատասխան կառուցված առյուծների, արջերի և գայլերի նոր ազատավանդակները, ինչպես նաև կարանտինը։ Միաժամանակ աշխատանքներ կիրականացվեն այգու՝ խիստ անհրաժեշտ պարսպապատման ուղղությամբ։<br>Այգում աշխատանքներ են տարվելու կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և նոր տեսականիով ապահովելու նպատակով։<br>Նախատեսվում է «Երևանի կենդանաբանական այգում վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում։ | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ բազմատեսակ շոու-ծրագրեր, մանկական խաղեր, մրցույթներ և այլն։<br>Կազմակերպվել են մայրաքաղաքի արվեստի դպրոցների, նվագախմբերի, վոկալ ստուդիաների ու պարային համույթների սաների համերգային ելույթները։<br>Կենդանաբանական այգում աշխատանքներ են տարվել կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և նոր տեսականիով ապահովելու նպատակով ինչպես նաև այգում վայրի կենդանիների պահպանման, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացման ու ցուցադրման ուղությամբ։<br>Կենդանաբանական այգում իրականացվել են տարածքի, ազատավանդակների մասնակի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ։<br>Ապահովվել է միջազգային ստանդարտներին համապատասխանող (արջերի, առյուծների և գայլերի) ազատավանդակների շահագործումը։ | Հունվար-դեկտեմբեր | |
| 11. | Էրեբունի-Երևան 2800-ամյակի հոբելյանական | 2018 թվականին Երևանի հիմնադրման 2800-ամյակի կապակցությամբ ողջ տարվա կտրվածքով մայրաքաղաքում, | «Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում իրականացվել են բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական- | 3-րդ և 4-րդ եռամսյակներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | միջոցառումներ | մարզերում և արտերկրում նախատեսվում են Երևանին նվիրված բազմաթիվ միջոցառումներ, ծրագրեր ու ակցիաներ: «Էրեբունի Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում կիրականացվեն բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական-ճանաչողական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, հրատարակչական, ֆիլատելիստական միջոցառումներ, տոնական, հանդիսավոր համերգաշարեր: | ճանաչողական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, հրատարակչական միջոցառումներ, տոնական, հանդիսավոր համերգաշարեր: Մայրաքաղաքի ծննդյան տոների անբաժան ուղեկիցն են դարձել սիրված ու ճանաչված երաժշտախմբերի՝ բենդերի կատարումները: Հոբելյանական տոնակատարության առիթով այս տարի ծրագիրն ավելի հագեցած էր: Հյուսիսային պողոտայում կահավորված բեմահարթակից անցորդ երևանցիների ու մայրաքաղաքի բազմաթիվ հյուրերի համար ելույթ են ունեցել «Դը բենդ», «Գողթ» «Հայ մյուզիք» և այլ նվագախմբեր:<br>Տոնական քայլերթի մասնակից ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի փողային նվագախմբերը կատարել են մայրաքաղաքին նվիրված հայտնի ու սիրված երգերի մեղեդիներ:Մեկնարկելով Ազատության հրապարակից՝ փողային նվագախմբերի քայլերթը եզրափակվել է Հանրապետության հրապարակում:<br>Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հարակից պուրակը մեկտեղել էր դասական երաժշտության սիրահարներին:<br>Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակին նվիրված տոնական միջոցառումների ժամանակ ելույթ են ունեցել Հայաստանի պարի պետական, Երգի պետական համույթները, ինչպես նաև «Գութան», «Մարաթուկ», «Ակունք», «Կարին», «Բերդ» և ազգագրական այլ խմբեր:<br>«Երևան 2800» տոնական ծրագրով մայրաքաղաքի տարբեր հատվածներում տեղակայված բեմահարթակներում օրվա ընթացքում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ:<br>Հյուսիսային պողոտայում ներկայացվեց տարազների ցուցադրություն՝ «Ուրարտուից մինչև օրս» խորագրով:<br>Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակի առթիվ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպած տոնական բեմերից մեկն իր շուրջն էր համախմբել ռոք երաժշտության սիրահարներին:<br>2800-ամյա Երևանում հոբելյանական միջոցառումները շարունակվեցին նաև երեկոյան: Մայրաքաղաքը բնութագրող ու այցեքարտային վայրերից մեկում՝ Կասկադ համալիրում, ավանդույթի համաձայն, ջազի բեմահարթակն էր:<br>Վաղ առավոտից Երևանի տարբեր հատվածներում 2800-ամյա Երևանի ծննդյան օրը խորհրդանշող տոնական միջոցառումներն ամփոփվել են Հանրապետության հրապարակում՝ գալահամերգով:<br>Երևան քաղաքի պատմության թանգարանի սրահում կազմակերպվել է մայրաքաղաքի 2800-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողով: | | |
| **Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական, հանրային միջոցառումների կազմակերպում | Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական և հանրային մարզական միջոցառումների կազմակերպում՝ ՀՀ Նախագահի մրցանակների համար մարզական մրցույթ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար «առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային առաջնություն, Երևան քաղաքի 36 առաջնություն, ուսումնամարզական 2 հավաք, Երևան և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակում կազմակերպվող մարզաառողջարարական ու մարզական միջոցառում և | Երևան քաղաքի «Հայաստան» մարզական միության մարզադաշտում կազմակերպել է աթլետիկայի Երևան քաղաքի 2018թ. ձմեռային բաց առաջնությունը:<br>Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոցի մարզասրահում կազմակերպել է ռենձյուի Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:<br>Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոցի մարզասրահում անցկացվել է շաշկու Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:<br>Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում կազմակերպել է հանդբոլի Երևան քաղաքի առաջնությունը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100 և Երևանի հիմնադրման 2800 ամյակներին: | Աշխատակազմի սպորտի բաժին<br>Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող 2 միջոցառում: | Կազմակերպվել է վոլեյբոլի Երևան քաղաքի առաջնությունը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100 և Երևանի հիմնադրման 2800 ամյակներին:<br>Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրում ներառված հունիսմեկյան մարզական միջոցառումներից առաջինը մեկնարկել է մայրաքաղաքի «Սպարտակ» մարզադահլիճում: «Առողջ Երևան» խորագրով մարզամշակութային տոնահանդեսն անցկացվել է 12 վարչական շրջանների մանկապարտեզների թիմերի մասնակցությամբ:<br>Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Երևանի Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոցում առաջին անգամ կազմակերպվել էր «Ամառային սառույց» խորագրով տոնական ծրագիր:<br>«Հրազդան» մարզադահլիճում անցկացվել է Բադմինթոնի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն:<br>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Ազատության հրապարակում տեղի է ունեցել վոլեյբոլ, բասկետբոլ, սուսերամարտ և հանդբոլ մարզաձևերի՝ «Փորձիր քեզ մարզաձևերում» կարգախոսով միջոցառում:<br>Անցկացվել է բասկետբոլի Երևան քաղաքի առաջնություն «Միկա» մարզադաշտում:<br>Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրի մարզադաշտում անցկացվեց «Լավագույն մարզական ընտանիք 2018» մրցույթը:<br>«Երևանյան ամառ 2018» միջոցառումների շրջանակում Մոնթե Մելքոնյան ճանապարհահատվածում անցկացվել են մոտոկրոսի և մոտոֆրիսթայլի ցուցադրական մրցումներ:<br>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Սևանա լճի առազաստային սպորտի «Երևան» ակումբի ջրային տարածքում անցկացվեց ջրային մարզաձևերի մրցումներ և ցուցադրական շոու: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Անցկացվեց մարզաառողջարարական ճանաչողական հետիոտն արշավ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի տարածքում:<br>«Գրանդ սպորտ» մարզահամալիրում անցկացվեց լողափնյա վոլեյբոլի մինչև 16 տարեկանների Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:<br>Սևանա լճում անցկացվեց թիաբորդի Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:<br>Երևանի թիմը մասնակցել է Ծաղկաձոր քաղաքում անցկացված «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի 2018 թվականի եզրափակիչ փուլին և 2-րդ տարին անընդմեջ նվաճել հաղթողի կոչումը:<br>Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է երիտասարդների աշխարհի գավաթի առաջնություն՝ աղջիկների, տղաների և պարային զույգերի մասնակցությամբ:<br>«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մարզադաշտում անցկացվել է աթլետիկայի Երևան քաղաքի բաց առաջնություն:<br>Կազմակերպվել է «Ավիացիոն մարզաձևի Երևան քաղաքի առաջնություն Արզնի օդանավակայանում:<br>«Միկա» մարզահամալիրում անցկացվել է Վահան Ջատիկյանի անվան ըմբշամարտի 19-րդ միջազգային մրցաշարը:<br>«Էրեբունի-Երևան 2800» տոնակատարությունների շրջանակներում «Էրեբունի-Երևան» գավաթի համար Կարապի լճի շրջակայքում անցկացվել են մրցումներ սթրիթբոլ, ռենձյու, նարդի, շաշկի, ըմբշամարտ, մարզաձևերից:<br>Երևանյան լճում անցկացվել է ակադեմիական թիավարության, բայդարկաներով և կանոէներով թիավարության Երևան քաղաքի առաջնություններ:<br>«Միկա» մարզահամալիրում անցկացվել է ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ռուդոլֆ Կարապետյանի և ԽՍՀՄ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միջազգային կարգի սպորտի վարպետ Եղիշե Կարապետյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի տասներորդ միջազգային հուշամրցաշարը, որին մասնակցել են Երևանի և ՀՀ մարզերի, Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի ըմբիշները:<br>Գոլֆի «Արարատ» ակումբի մարզադաշտում անցկացվել է Գոլֆի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության ըմբշամարտի մարզադահլիճում անցկացվել է ազատ և հունա-հռոմեական ըմբշամարտ մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ:<br>Հրանտ Շահինյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճում անցկացվել է ակրոբատիկ մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:<br>Երևանի հրաձգության մարզադպրոցում անցկացվել է գնդակային հրաձգության Երևան քաղաքի առաջնությունը:<br>Մոնթե Մելքոնյան փողոցում անցկացվել է խճուղային հեծանվավազքի Երևան քաղաքի առաջնություն:<br>Երևանի Րաֆֆու անվան հիմնական դպրոցի մարզադահլիճում անցկացվել է սեղանի թենիսի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Դինամո» մարզադահլիճում անցկացվել է ձյուդոյի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Երևանի ազգայի կոխ ըմբշամարտի մարզակումբ» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սամբոյի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ի մարզադահլիճում անցկացվել է Երևանի հատուկ դպրոցների թիմերի ֆուտբոլի մրցաշար:<br>«Սպիտակ» մարզաառողջարարական համալիրի լողավազանում անցկացվել է լողի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ի մարզադահլիճում անցկացվել է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ֆուտզալի Երևան քաղաքի առաջնություն:<br>Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի մարզադահլիճում անցկացվել է գեղարվեստական մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:<br>«Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության ՕՀ մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սպորտային մարմնամարզության Երևան քաղաքի բաց առաջնություն:<br>Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության դահլիճում կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործությունների ցուցահանդես՝ համերգային ծրագրի ուղեկցությամբ, որին մասնակցել են Երևանի և ՀՀ այլ քաղաքների հաշմանդամություն ունեցող ստեղծագործող անձինք:<br>«Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սուսերամարտի Երևան քաղաքի բաց առաջնություն:<br>«Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է նետաձգության Երևան քաղաքի առաջնություն:<br>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ի մարզադահլիճում անցկացվել է ֆուտբոլի սիրողական թիմերի մրցաշար:<br>«Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սպորտային պարերի Երևան քաղաքի առաջնություն:<br>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ի մարզադահլիճում անցկացվել է Երևան քաղաքի ուսումնարանների և քոլեջների ուսանողների մասնակցությամբ սպարտակիադա՝ վոլեյբոլ և բասկետբոլ մարզաձևերից: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Միկա» մարզադահլիճում անցկացվել է բասկետբոլի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն: | | |
| 2. | Երևան–Ստեփանակերտ, Երևան–Մոսկվա քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված աշխատանքներ | Երևան-Ստեփանակերտ, Երևան-Մոսկվա և Երևան-Սանկտ-Պետերբուրգ քաղաքների համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում: | «Մոսկվայի օրերը Երևանում» միջոցառումների շրջանակում անցկացվել է շախմատի, ազատ ոճի և հունա-հռոմեական ոճերի ըմբշամարտի պատանեկան խաղեր Արաբկիրի շախմատի մարզադպրոցում, Հայաստան մարզական ընկերության ըմբշամարտի մարզադահլիճում:<br><br>«Երևան - Ստեփանակերտ պատանեկան մարզական խաղեր» միջոցառումը՝ հյուրընկալելով Ստեփանակերտի 33 անձից բաղկացած մարզական պատվիրակությանը՝ բասկետբոլ և հանդբոլ մարզաձևերից անցկացվել է «Միկա» մարզադահլիճում: | Հոկտեմբերի 4-7<br><br>Հոկտեմբերի 29-31 | |
| 3. | Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում | Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում: | «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Ազատության հրապարակում անցկացվել է մարզական սպարտակիադա, որին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 90 մարզիկներ՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շոու դաուն, սայլակավազք և շախմատ, վոլեյբոլ, բազկամարտ, բոչա, ծանրաձողի հրում պառկած դիրքից (փաուէրլիֆթինգ) մարզաձևերից:<br>Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվում են շուրջ 15 հոգուց բաղկացած տափօղակով հոկեյի թիմի կանոնավոր մարզումներ:<br>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում մայրաքաղաքի Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է հաշմանդամություն ունեցող անձանց պարահոկեյի ցուցադրական խաղ:<br>Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվել է «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի եզրափակիչ փուլը: Մրցույթն անցկացվել է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, շաշկի, դարթս, բազկամարտ և եռամարտ մարզաձևերից՝ լողական, | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեսողական, հենաշարժային խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող հաշմանդամների մասնակցությամբ:<br>Միջազգային պարալիմպիկ կոմիտեի կողմից Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է հաշմանդամների պարահոկեյի վերապատրաստման դասընթացներ: | | |
| 4. | Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ–մարզուհիների մասնակցության ապահովում | Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ–մարզուհիների մասնակցության ապահովում Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում: | «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզուհիները մասնակցել են Իսրայելի Ռիոն Լե Զիոն քաղաքում անցկացված «9th Israjel Junior» միջազգային մրցաշարին, որտեղ Գայանե Մամաջանյանը հաջողությամբ նվաճել է բրոնզե մեդալ:<br><br>Ֆուտբոլի, բասկետբոլի և աթլետիկայի Երևան քաղաքի հավաքական թիմերը մասնակցել են Հայաստանի Հանրապետության առաջնություններին:<br><br>Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի 2 սամբիստներ գործուղվել են Չեխիայի Պրահա քաղաք՝ մասնակցելու Եվրոպայի սամբոյի առաջնությանը:<br><br>Բասկետբոլի, ֆուտբոլի, խոտի հոկեյի և աթլետիկայի Երևան քաղաքի պատանեկան հավաքական թիմերը գործուղվել են ՀՀ մարզեր՝ մասնակցելու ՀՀ առաջնություններին:<br><br>«Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոցի սաները Հունգարիայի Միսկոլկ քաղաքում մասնակցել են գեղասահքի միջազգային մրցաշարի, որտեղ գրանցել են հաջողություններ:<br><br>Թբիլիսի է գործուղվել վոլեյբոլի Երևան քաղաքի կանանց հավաքական թիմը:<br>Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մարզադպրոցի, Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի և Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի հանդբոլի աղջիկների թիմերը գործուղվել են Վանաձոր՝ մասնակցելու հանդբոլի աղջիկների ՀՀ առաջնությանը:<br>Երևանի ենթակայության մարզադպրոցների վոլեյբոլի 4 թիմերը մասնակցել են Վանաձորում կայանալիք Ֆելիքս Դալլաքյանի հիշատակին նվիրված 2003-2004թթ. ծնված պատանիների և աղջիկների վոլեյբոլի հուշամրցաշարին:<br>ՌԴ Դոնի–Ռոստով քաղաքում անցկացվեց ֆուտբոլի միջազգային մրցաշար, որտեղ մասնակցում էր «Երևան» թիմը:<br>Երևան քաղաքի ակրոբատիկայի հավաքական թիմը մեկնել է Բաթումի՝ մասնակցելու Աջարիայի Ակրոբատիկ մարմնամարզության բաց առաջնությանը:<br>Երևանի կենտրոնում գտնվող Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահի տարածքում ռուսական շաշկու միջազգային ֆեդերացիայի և շաշկու ՀՀ ֆեդերացիայի համատեղ ջանքերով առաջին անգամ կազմակերպվել է ռուսական շաշկու միջազգային մրցաշար «ՀԱՅԱՍՏԱՆ-2018»:<br>Թուրքիայի Ստամբուլ քաղաք է գործուղվել Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի 1 ըմբիշ՝ մասնակցելու մինչև 23 տարեկանների Եվրոպայի առաջնությանը:<br><br>Ա. Ազարյանի անվան մարմնամարզության ՕՀ մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է «Ալբերտ Ազարյանի գավաթ» միջազգային մրցաշարը:<br><br>Ուկրաինայի Խարկով քաղաք է գործուղվել լողափնյա վոլեյբոլի Երևան քաղաքի հավաքական թիմը՝ մասնակցելու Արևելյան Եվրոպայի երկրների պատանեկան առաջնությանը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Երևանի պետական համալսարանի մարզադահլիճում առաջին անգամ անցկացվեց Հայաստանի ցատկացանցի բաց առաջնություն, որին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի մոտ 90 մարզիկ-մարզուհիներ: Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվեց «Երևանյան գիշերներ» հոկեյի միջազգային մրցաշար՝ Ռուսաստանի ընկերական լիգայի և Երևանի հոկեյի թիմի մասնակցությամբ: Թուրքիայի Ստամբուլ քաղաք է գործուղվել գեղարվեստական մարմնամարզության Երևան քաղաքի հավաքական թիմը: «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների բասկետբոլի թիմերը մասնակցել են Եղվարդ, Արմավիր, Գյումրի և Վանաձոր քաղաքներում անցկացված 2006-2007թթ. ծնված պատանիների և 2004-2005թթ. ծնված աղջիկների 2018-2019թթ. բասկետբոլի կանոնավոր առաջնության նախընտրական փուլին: Երևանը ներկայացնող 3 թիմեր գործուղվել են Հայաստանի տարբեր քաղաքներ՝ մասնակցելու բասկետբոլի առաջնություններին: | | |
| 5. | Երևանի թիմերի և երևանցի մարզիկների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում | Հանրապետական ու միջազգային մրցաշարերին, առաջնություններին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով Երևանի թիմերի և երևանցի մարզիկ-մարզուհիների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում: | Բասկետբոլի Երևան քաղաքի կանանց և տղամարդկանց հավաքական թիմերի համար Վանաձորում անցկացվել է ուսումնամարզական հավաք:<br><br>Վանաձոր քաղաքի մարզաբազայում Երևան քաղաքի թիմի համար անցկացվել է ակրոբատիկ մարմնամարզության ուսումնամարզական հավաք: | Մայիսի 22-31<br><br>Օգոստոսի 19-28 | |
| 6. | «Առողջ սերունդ՝ պաշտպանված | Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Առողջ | Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով մեկնարկվել է «Առողջ | 2-րդ, 3-րդ եռամսյակներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում | սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում: | սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական մարզական մրցաշարը: Մանկական զբոսայգում անցկացվեց «Երևանի թռչող գնդակ» վոլեյբոլի բակային առաջնությունը:<br>Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց «Երևանի կաշվե գնդակ» ֆուտբոլի բակային առաջնությունը:<br>Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Երևանի ոսկե զամբյուղ» բասկետբոլի բակային առաջնությունը:<br>Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց «Երևանի սրընթաց գնդակ» հանդբոլի բակային առաջնությունը:<br>Մանկական զբոսայգում անցկացվեց Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի «Շախմատային Երևան 2800» շախմատի առաջնությունը:<br>Մանկական զբոսայգում անկցացվեց Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար շաշկու բակային առաջնությունը:<br>«Երևանյան ամառ 2018» միջոցառումների շրջանակում մանկական զբոսայգում անցկացվեց եռանարդու ցուցադրական մրցաշար:<br>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով կազմակերպվել է աթլետիկայի առաջնություն: | | |
| 7. | Բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում | Երևանի քաղաքապետի մրցանակների սահմանում՝ միջազգային և հանրապետական մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսման նպատակով: | Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական մարզական մրցաշարի բոլոր հաղթողներին հանձնվել են գավաթներ, իսկ ընդհանուր հաշվարկով հաղթած վարչական շրջանի թիմը պարգևատրվել է Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթով:<br>Պարևատրվել են Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրի մարզադաշտում կայացած «Լավագույն մարզական ընտանիք-2018» մրցույթի հաղթող Երևանի թիմի | Հուլիս-Օգոստոս | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասնակից ընտանիքներն ու մարզիչները: | | |
| 8. | Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովելու աշխատանքների իրականացում | Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման գործընթացի շարունակականության ապահովում: | 1.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-2<br>2.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-3<br>3.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-1<br>4.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/168-1<br>5.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/193-1<br>6.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/193-2<br>7. N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185-1<br>8.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185-2<br>9.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/168-2<br>10.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-2<br>11.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-1<br>12.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-3<br>Երևանի ենթակայության մարզադպրոցներից ընդունվել են գույքի անհրաժեշտ հայտեր՝ ՀՀ Գնումների օրենսդրության համաձայն մարզական արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման գործընթաց սկսելու նպատակով:<br>ՀՀ Գնումների օրենսդրությամբ սահմանված մցութային կարգով, Երևանի ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների համար ձեռք է բերվել գույք այն է՝ մարզագույք, կահույք, էլեկտրոտեխնիկա, բժշկական սարքավորումներ և այլն: Գույքը հանձնվել է Երևանի ենթակայության մարզական կազմակերպություններին: | 1. «Սմարթլայն» ՍՊԸ 29.05.2018թ.<br>2.«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ 29.05.2018թ.<br>3.«Ֆոտոն» ՍՊԸ 29.05.2018թ.<br>4.«Դառես» ՍՊԸ 01.06.2018թ.<br>5.«Էլկոմպ» ՍՊԸ 01.06.2018թ.<br>6. «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ 01.06.2018թ.<br>7.«Տիգման գրուպ» ՍՊԸ 06.06.2018թ.<br>8.«Բրուս» ՍՊԸ 06.06.2018թ.<br>9.«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ 06.06.2018թ.<br>10. «Լուառ» ՍՊԸ 12.06.2018թ.<br>11.«Սպորտ Սիթի» ՍՊԸ 12.06.2018թ.<br>12. «Բրուս» ՍՊԸ 14.06.2018թ. | |
| 9. | Համահայկական երկրորդ ձմեռային խաղերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում | Համահայկական երկրորդ ձմեռային խաղերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ ըստ մարզաձևերի ընտրական մրցաշարերի անցկացում, հավաքական թիմերի ձևավորում, հավաքականների | Համահայկական ձմեռային խաղերը 2018թ. չեն կայացել համաշխարհային կոմիտեի որոշման համաձայն, ինչի հետ կապված երևանյան թիմեր չեն ձևավորվել: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համար ուսումնամարզական հավաքների անցկացում, միասնական մարզահանդերձանքով ապահովում և մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցության իրականացում: | | | |
| 10. | Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններում իրականացվող ուսումնամարզական գործընթացի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացում | Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններում իրականացվող ուսումնամարզական գործընթացի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացում: | Կազմվել ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն է ուղարկվել Երևանի ենթակայության մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների՝ վերապատրաստման դասընթացների մասնակցելու վերաբերյալ տեղեկատվություն:<br>Երևանի ենթակայության շախմատի մարզադպրոցների շախմատ, շաշկի, ռենձյու մարզաձևերի մարզիչները մասնակցել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում անցկացվող վերապատրաստման դասընթացներին՝ համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմած ժամանակացույցի:<br>Ապահովվել է Երևանի ենթակայության մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների մասնակցությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում անցկացվող վերապատրաստման դասընթացներին՝ բադմինթոն, աթլետիկա ազատ ոճի ըմբշամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, հայկական ազգային կոխ ըմբշամարտ և ձյուդո մարզաձևերից:<br>Անցկացվել են խորհրդակցություններ վարչական շրջանների համապատասխան մասնագետների և Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տնօրենների հետ, իրականացվել են ստուգայցեր մարզադպրոցներ: | Հունվար-դեկտեմբեր | |

## Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, | Նշումներ |
|---|---|---|---|---|---|

| | անվանումը | | | կատարման ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում | Սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում: | ԵՔ-ԲՄԾՁԲ-18/69-2 27.02.2018թ.<br>Կազմակերպվել է սոցիալական հոլովակների պատրաստման և այդ հոլովակների հանրայնացման աշխատանքներ: | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին<br>Ա/Ձ Արարատ Ղուկասյան<br>Ապրիլ | |
| 2. | Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքների կազմակերպում | Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքների կազմակերպում բոլոր վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար: | Կազմակերպվել են ծնողավարման հմտությունների վերաբերյալ սեմինար պարապմունքներ Երևանի 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար, ընտանիքներին տրամադրվել է սննդի փաթեթներ: | մարտ | |
| 3. | «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքների խրախուսման միջոցառումների կազմակերպում | «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքների խրախուսման միջոցառումների կազմակերպում: | Իրականացվել է միջոցառում «Ընտանիքի միջազգային օրվա» կապակցությամբ՝ Երևանի խնամատար ընտանիքների մասնակցությամբ, որի ավարտին երեխաներին տրամադրվել են նվերներ, ծնողներին՝ ծաղկեփնջեր: | Մայիս | |
| 4. | Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության և Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի երեխաների համար գիտակրթական ֆիլմերի ցուցադրության կազմակերպում | Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության և Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի երեխաների համար գիտակրթական ֆիլմերի ցուցադրության կազմակերպում: | Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի և հ. 2 հատուկ դպրոցի երեխաների համար իրականացվել է դպրոցական պլանիտարում: Միջոցառման ընթացքում իրականացվել է հայերեն լեզվով ֆիլմերի դիտում՝ շրջակա աշխարհի, աստղագիտության և կենսաբազմազանության վերաբերյալ: | սեպտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ: | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ իրականացվել են՝<br>• այցելություններ Երևանի ծննդատներ /նվերների, ծաղկեփնջերի տրամադրում/,<br>• այցելություններ «Երևանի մանկան տուն» և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» հեքիաթի հերոսների մասնակցությամբ /նվերների տրամադրում/,<br>• կազմակերպվել է հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ միջոցառում /նվերների տրամադրում/: | Մայիս 25-Հունիսի 1 | |
| 6. | Հատուկ կարիքներով երեխաների այցելությունների կազմակերպում թանգարաններ | Հատուկ կարիքներով երեխաների այցելությունների կազմակերպում թանգարաններ: | Հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է այցելություններ Երևան քաղաքի թանգարաններ և Ազգային պատկերասրահ: | Ապրիլ | |
| 7. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար թեմատիկ սեմինարների կազմակերպում | Բոլոր վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար թեմատիկ սեմինարների կազմակերպում: | Կազմակերպվել է սեմինար՝ միգրացիոն օրենսդրության բարեփոխումների և ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենքի և ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ, որին մասնակցում էին Երևան քաղաքի 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամները և սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցները: | մարտ | |
| 8. | Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում | Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում՝ հատուկ կարիք ունեցող շնորհալի և տաղանդավոր երեխաների մասնակցությամբ: | Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված կազմակերպվել է միջոցառում /ձեռքի աշխատանքների և լուսանկարների ցուցահանդես/ և այցելություն Երևանի տիկնիկային թատրոն՝ հատուկ կարիք ունեցող շնորհալի և տաղանդավոր երեխաների մասնակցությամբ: | Դեկտեմբեր | |
| 9. | Առանց ծնողական խնամքի մնացած | | Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած և առանց ծնողական խնամքի մնացած | տարվա ընթացքում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում: | | երեխաների թվին պատկանող 91 երեխա, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ՝ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով: | | |
| 10. | Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում բազայում | | Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 111 երեխայի տվյալ: | տարվա ընթացքում | |
| 11. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում | | Հիմք ընդունելով ծնողի դիմումը և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 670 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: | տարվա ընթացքում | |
| 12. | Մանկատների բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն: | | «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգի» համաձայն տրվել է 9 եզրակացություն խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին, կնքվել է 11 պայմանագիր Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև: | տարվա ընթացքում | |
| 13. | Մանկատների բեռնաթափման, երեխայի | | Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին | տարվա ընթացքում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի իրականացում: | | տրամադրվել է 40 դրական եզրակացություն:<br>23 օտարերկրյա քաղաքացու տրվել է խորհրդատվություն՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու վերաբերյալ և ուղղորդվել ՀՀ արդարադատության նախարարություն:<br>Ներկայացված փաստաթղթերի, որդեգրման վերաբերյալ դրական եզրակացությունների հիման վրա հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 65 անձ:<br>10 քաղաքացու դիմումի հիման վրա կատարվել է հարցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որդեգրման նպատակով երեխայի ընտրության վերաբերյալ:<br>Որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման վերցված 60 անձանց տրվել է որդեգրման ենթակա երեխաների ցանկ:<br>Իրականացվել է վերահսկողություն Երևան քաղաքում որդեգրողների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ /6 ընտանիք/: | | |
| 14. | Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում և այդ հաստատություններից դուրսգրում: | | Վարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 57 երեխա տեղավորվել է մանկատուն, տրվել է մանկատնից դուրսգրման մասին 19 եզրակացություն: | տարվա ընթացքում | |
| 15. | Միջազգային և տեղական հասարակական կառույցների և կազմակերպություններ | | Իրականացվել է համագործակցություն «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի, «ՀՕՄ»-ի, Վորլդ Վիժն Հայաստան միջազգային կազմակերպության, «Քաղաքացիական հասարակական ինստիտուտ» ՀԿ-ի, ՄԱԿ-ի գրասենյակի, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական | տարվա ընթացքում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | երի հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում: | | հիմնադրամի, «Յունիսեֆ»-ի, , «Հայ մայրեր» ՀԿ-ի, «Բարի մամա» ՀԿ-ի, «4ՖԵՄ» կանանց իրավապաշտպան հասարակական կազմակերպության, ԱՄԿ Երևանի գրասենյակի, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» ՀԿ-ի, ՀՕՖ–ի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամի, Երևանի մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության այլ հաստատությունների, ՀՀ ոստիկանության ԱԳ բաժինների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և արդարադատության նախարարությունների համապատասխան բաժինների հետ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրման և հետագա խնդիրների կանխարգելման նպատակով: | | |
| 16. | Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների լուծման նպատակով ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների և ԽՀՀ-ների հետ համագործություն, վարքային խնդիրներ ունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների | | ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից ստացված տեղեկատվություն համաձայն անչափահաս մուրացիկ և թափառաշրջիկ 25 երեխաների տվյալներ փոխանցվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին՝ ընտանիքներին հնարավորինս աջակցելու և հետագայում մուրացիկության դեպքերը կանխարգելելու համար:<br>ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի և ծնողի դիմումի հիման վրա 2 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված<br>լինելու մասին տեղեկանք, որի հիման վրա վերջինս տեղավորվել է Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիր: | տարվա ընթացքում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կողմնորոշում և տեղավորում | | | | |
| 17. | Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝անձնական քարտի լրացում, անձնական գործի կազմում և կենտրոնացված հաշվառման ներկայացում | | ՀՀ կառավարության 18.03.2010թ. ի. 269-Ն որոշմամբ հաստատված Որդեգրման կարգի համաձայն, հաշվառվել է որդեգրման ենթակա 53 երեխա, դատարանի վճիռների հիման վրա՝ հաշվառումից հանվել է որդեգրման ենթակա 15 երեխա: | տարվա ընթացքում | |
| **Միջազգային համագործակցություն** | | | | | |
| Հ/հ | Ծրագրի կամ միջոցառման անվանումը | Նախատեսված աշխատանքների նկարագիր | Աշխատանքների իրականացման գործընթաց | Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ | Նշումներ |
| 1. | Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված աշխատանքներ | Նախատեսվում է իրականացնել Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնական միջոցառումների մեծածավալ նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ: | 1. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-5<br>2. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-3<br>3. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-2<br>4. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-1<br>5. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-4<br>6. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-1<br>7. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-2<br>8. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-3<br>9. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-1<br>10. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-2<br>11. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-3<br>12. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-4<br>13. N ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/8<br>14. N ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/9<br>Պատրաստվել և ուղարկվել են Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների մասնակցության հրավերները Երևանի քույր և գործընկեր քաղաքներին:<br>Իրականացվել են Երևանի 2800-ամյակի կապակցությամբ | 1. Ֆ/Ա Անի Մանուկյան<br>2. Ֆ/Ա Արմեն Իսրայելյան<br>3. Ֆ/Ա Սյուզան Ղարդյան<br>4. Ֆ/Ա Աննա Մանուկյան<br>5. Ֆ/Ա Անի Հովակիմյան<br>6. «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ<br>7. «Երևան հյուրանոց» ԲԲԸ<br>8. «Մետրոպոլ» ՍՊԸ<br>9. «Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ<br>10. «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ<br>11. «Տոսպիա» ՍՊԸ<br>12. «Ուրարտու ռեստորան»<br>13. Ա/Ձ Վիկտոր Միրումյան | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Երևան ժամանած քույր և գործընկեր քաղաքների պատվիրակությունների այցի նախապատրաստական, այցի ծրագրի կազմակերպչական աշխատանքներ: Մի շարք քաղաքներում ՀՀ դեսպանությունների հետ համատեղ կազմակերպվել են Երևանի 2800-ամյակին նվիրված ցուցահանդեսներ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի ընթացքում «Երևան-2800 ցուցահանդես»-ի կազմակերպման ուղղությամբ: Ցուցահանդեսը հանվել է ընդհանուր ծրագրից և դրանով պայմանավորված չի իրականացվել: | 14.«Է.Ֆ.Դ.» ՄՊԸ Հունվար-դեկտեմբեր | |
| 2. | Բանակցություններ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ | Կվարվեն բանակցություններ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ: | Աշխատանքներ են իրականացվել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ հետ՝ GIZ-ի կողմից իրականացվող «Էլ. կառավարումը Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի շրջանակներում: «Էլ-կառավարումը քաղաքացիակենտրոն և թափանցիկ վարչարարության գործընթացների համար» ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբերի հանդիպմանը մասնակցելու նպատակով 2018թ. ապրիլի 16—ից 19-ը Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները գործուղվել են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի, իսկ 2018թ. նոյեմբերի 5-ից 8-ը՝ Ուկրաինայի մայրաքաղաք Կիև: | Հունվար-դեկտեմբեր | |
| 3. | Աջակցություն ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների | Կիրականացվի աջակցություն ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպման համար: | Բանակցություններ են իրականացվել Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ՝ ներդրումային միջազգային ցուցահանդեսներին Երևանի մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպման համար: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կազմակերպման համար | | | | |
| 4. | Համագործակցություն միջազգային և տարածաշրջանային կառույցների, սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ | Կակտիվացվի համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների, սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: | Աշխատանքներ են իրականացվել Երևան ՏարազՖեստ 2018 ազգային տարազի 4-րդ միջազգային փառատոնին ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: | Հունվար-դեկտեմբեր | |
| 5. | Տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքներ | Կակտիվացվեն տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները: | N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/88<br>Աշխատանքներ են իրականացվել ՉԺՀ Ցինդաոյի քաղաքապետարանի հետ՝ Ցինդաո քաղաքից գործարարների Երևան կատարելիք այցի առնչությամբ: Այցը կայացել է, Երևանի քաղաքապետարանում տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ, ներկայացվել են Երևան քաղաքի ներդրումային ծրագրերը: | «Դեմգո» ՍՊԸ<br>Օգոստոս | |
| 6. | Երևանի քույր և գործընկեր քաղաքներին միջոցառումների և փառատոնների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում | Կտրամադրվի տեղեկատվություն Երևան քաղաքում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ Երևանի քույր և գործընկեր քաղաքներին, ինչպես նաև կակտիվացվեն կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև՝ զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով: | Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել՝ Էրեբունի-Երևան 2800-ամյակի միջոցառումների շրջանակում «Երևանը՝ ուրարտական ժառանգության համատեքստում» գիտաժողովի և «Խելացի քաղաքներ. նոր հնարավորություններ և հեռանկարներ» միջազգային ֆորումի անցկացկացման վերաբերյալ: | | Ընդհանուր ծրագրից այս համաժողովը հանելու հիմքով չի իրականացել: |
| 7. | Եղբայրության պուրակների և | Նախատեսվում է իրականացնել եղբայրության պուրակներ և | Բանակցություններ են իրականացվել մի շարք քաղաքների հետ՝ փողոցների, պուրակների և զբոսայգիների «Երևան» | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | զբոսայգիների հիմնում | զբոսայգիներ հիմնելու ծրագրեր: | անվամբ անվանակոչման նպատակով: | | |
| 8. | Վարչական շրջանների և գործընկեր քաղաքների միջև համագործակցության ծավալում | Կխրախուսվեն և կընդլայնվեն վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունները: | Նախապատրաստրաստական աշխատանքներ են տարվել Արաբկիր վարչական շրջանի պատվիրակության այցը Պլեսսի-Ռոբինսոն կազմակերպելու ուղղությամբ:<br>Նախապատրաստրաստական աշխատանքներ են տարվել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակության այցը Չուվաշիայի Հանրապետության մայրաքաղաք Չեբոքսար կազմակերպելու ուղղությամբ: | ապրիլի 5-ից 10-ը<br><br>օգոստոսի 17-ից 20-ը | |
| 9. | Համագործակցության ակտիվացում արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում | Կակտիվացվեն համագործակցային կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ և այլն/: | 1. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/34<br>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-2<br>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-3<br>4. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-1<br>5. ԵՔ-ՄԱԱՊՁԲ- 18/4<br>6. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/65-2<br>7. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/60<br>8. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/62<br>9. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/5-2<br>10. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/60<br>11. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-3<br>12. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-2<br>13. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/3<br>14. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-2<br>15. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-1<br>16. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/1<br>17. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-3<br>18. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-1<br>19. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/5-1<br>20. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/65-1<br>21. ԵՔ-ՄԱԾՁԲ 18/75<br>2018թ. մայիսի 26-ից 27-ը Երևանի քաղաքապետի տեղակալ Դ. Օհանյանի գլխավորած պատվիրակությունը | 1.Ֆ/Ա Ա. Ալոև<br>2.Ֆ/Ա Ա. Ալոև<br>3.Ֆ/Ա Ա. Մանուկյան<br>4.Ֆ/Ա Է. Երիցյան<br>5/Ֆ/Ա Արամ Տեր-Վարդանյան<br>6.Արիես Քեյթրինգ Սերվիս<br>7.Ֆրիզե ՍՊԸ<br>8.ԲԱՍ ԼԵՆԴ ՍՊԸ<br>9.Բիզնես Սթայլ ՍՊԸ 10.Երևան Հյուրանոց ԲԲԸ<br>11.Ա/Ձ Կարինե Աճեմյան<br>12.Ֆ/Ա Կարինե Ներսիսյան<br>13.«Միկրոալֆաե ՍՊԸ<br>14.ԴեմգոՍՊԸ<br>15.Ֆ/Ա Սպարտակ Գևորգյան<br>16.Շշուկ ՍՊԸ<br>17.Հայր և որդի Երեմյաններե ՍՊԸ<br>18.Տոսպիա ՍՊԸ<br>19.Յունիպրինտե ՍՊԸ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասնակցեց Սանկտ Պետերբուրգի 315-ամյակին նվիրված միջոցառումներին:<br>2018թ.-ի հունիսի 26-28-ը կազմակերպվել են Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում, որի շրջանակներում համաձայնագրեր են ստորագրվել դպրոցների միջև: Վարպետության դասընթացներ են անցկացվել Սանկտ Պետերբուրգից ժամանած երաժիշտների կողմից և կազմակերպվել է համատեղ համերգային ծրագիր: Բուժհաստատություններում կազմակերպվել են կլոր սեղաններ, հիվանդների հետազոտություններ և բժշկական խորհրդատվություններ: Տեղի է ունեցել սանկտպետերբուրգյան «Էսսե կվինտետ» համույթի համերգը: Կազմակերպվել են կլոր սեղաններ զբոսաշրջության, կրթության և առևտրատնտեսական համագործակցության ոլորտներում:<br>Նախապատրաստվել և կազմակերպվել է 2018թ.-ի հոկտեմբերի 16-17-ը Երևանի քաղաքապետի այցը Փարիզ՝ մասնակցելու TUMO-Փարիզի բացման արարողությանը:<br>2018թ. նոյեմբերի 25-ից 29-ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանի գործուղումը Մոսկվա երկկողմ համագործակցության հարցերի քննարկման նպատակով:<br>Երևանի և Մոսկվա քաղաքների գործադիր իշխանության մարմինների միջև 2018-2021թթ. համար համագործակցության ծրագրի շրջանակներում 2018թ. դեկտեմբերի 17-ից 19-ը Երևանում անց են կացվել Մոսկվայի մշակույթի օրերը, որոնց շրջանակներում կազմակերպվել են կլոր սեղան, համերգ, ստեղծագործական երեկո: | 20.ՈՒՐԱՐՏՈՒ ՌԵՍՏՈՐԱՆԵ ՍՊԸ<br>21.«Երևան հյուրանոցե ԲԲԸ<br>Հունվար-հունիս | |
| 10. | Համագործակցության համաձայնագրերի թարմացում | Կթարմացվեն համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, | Աշխատանքներ են իրականացվել ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ: | Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ՝ համագործակցության համաձայնագրերի թարմացման ուղղությամբ:<br>Բանակցություններ են վարվել նաև Աթենքի քաղաքապետարանի հետ՝ ստորագրված համաձայնագրի թարմացման նպատակով: | | |
| 11. | Համագործակցությա ն համաձայնագրերի ստորագրում | Նախատեսվում է համագործակցության համաձայնագրերի ստորագրում Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Հունաստանի Ալեքսանդրապոլիս, Մարոկկոյի Տետուան և ՌԴ Չեբոկսարի քաղաքների հետ:<br>Կստորագրվի Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև 2018-2020թթ. համագործակցության ծրագիր: | Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նոր համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12. | Փորձի փոխանակում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում | Կիրականացվի փորձի փոխանակում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցության շրջանակներում: | Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալի ՌԴ մայրաքաղաք Մոսկվա կատարելիք այցի հետ կապված:<br>2018թ. մարտի 3-ից 5-ը Լիոնի քաղաքապետ Ժորժ Կեպենեկյանի Երևան այցի շրջանակներում հանդիպումներ, քննարկումներ են կազմակերպվել Երևան քաղաք տուրիզմի, արտաքին լուսավորության, թանգարանների և այլ ոլորտների պատասխանատուների և ֆրանսիացի համապատասխան գործընկերների հետ:<br>Հարցումներ են ուղարկվել Երևանի քույր և գործընկեր քաղաքներին՝ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում (համատիրությունների կառավարում, վերելակային տնտեսություն, հրավառություն, աղբահանություն, սանմաքրում, բազմաբնակարան շենքերի անձնագրեր և այլն) փորձի փոխանակման նպատակով: | Հունվար-դեկտեմբեր | |
| 13. | Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցությա ն շրջանակներում մասնագիտական սեմինարների կազմակերպում | Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում կշարունակվի մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագիրը՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ: | 1. N ԵՔ-ՄՔԾՁԲ- 18/ 105<br>2. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 107<br>3. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 104<br>4. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 109<br>5. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 106<br>6. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 110<br>Նախապատրաստվել և կազմակերպվել է 2018թ.-ի նոյեմբերի 17-ից 20-ը Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահ Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակության այցը Երևան: Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակության կազմում Երևան էին ժամանել Իլ դը Ֆրանսի շրջանի ընտրված պաշտոնյաներ, հայկական համայնքի ասոցիացիաների, տնտեսական ոլորտի ներկայացուցիչներ, ձեռնարկատերեր:<br>Այցի շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել Երևանի քաղաքապետի հետ, ստորագրվել է Երևան-Իլ դը Ֆրանս 2018-2021 թթ.-ի համար Ճանապարհային քարտեզը: | 1. Ֆ/Ա Արման Ալոն<br>2. «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ<br>3. «Երևան հյուրանոց» ԲԲԸ<br>4. «Արիես Քեյթրինգ Սերվիս»<br>5. «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ<br>6. «Միլենիում Սվիթ» ՍՊԸ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Այցի ընթացքում տեղի են ունցել մի շարք այցելություններ, հանդիպումներ ու քննարկումներ հատկապես գյուղատնտեսության, կայուն զարգացման, ձեռնարկատիրության, նորագույն տեխնոլոգիաների ու ստարտափերի ոլորտներում: | | |
| 14. | «Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունն ը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագրի անցկացում | Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ AIMF-ի աջակցությամբ կիրականացվի «Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագիրը: Կցուցաբերվի ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կկազմակերպվեն փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և կմշակվեն համատեղ ծրագրեր: | Էրեբունի հնավայրի պահպանման, զբոսաշրջության խթանման և տուրիստական ծառայությունների ընդլայնման համար Երևանի քաղաքապետարանի, Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի և «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի /CRAterre/ միջև ստորագրվել է «աշխատանքների իրականացման ֆինանսական և տեխնիկական աջակցության» համաձայնագիր: | Հունվար-դեկտեմբեր | |
| 15. | Ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին | Կցուցաբերվի ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև կապահովվի հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին: | Աշխատանքներ են իրականացվել «Եվրոսիթիս» ասոցիացիայի հետ: Աշխատանքներ են իրականացվում ասոցիացիայի հիմնական միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև ԵՄ ծրագրերում ընդգրկվելու կապակցությամբ: 2018թ. մայիսին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը մասնակցել է Աթենքում կայացած «Համագործակցության հարթակ» միջոցառմանը: | Հունվար-դեկտեմբեր | |
| 16. | Համագործակցությու ն «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ | Կակտիվացվի համագործակցությունը «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ: | Ընթացիկ աշխատանքներ են իրականացվել «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ: | Հունվար-դեկտեմբեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
